



ԱՐԱՄ ՔԻՉԱՐՅԱՆ

Ծննդյան 100-ամյակին նվիրված
գիտաժողովի նյութեր



Ա. Քոչարյանը ֆոնոզրաֆի միջոցով ձայնագրում է աշուղ Շերամին: Նկարը մեզ սիրով տրամադրել է ֆոլկլորագետ-երաժշտագետ Հասմիկ Ափինյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

Библиотека № 1

Сборник статей
о художественных
изданиях

Издательство
литературно-художественных

изданий СССР
Министерства культуры СССР

Составитель
А. А. Григорьев

Издательство
литературно-художественных

изданий СССР
Министерства культуры СССР



Москва 1970 г.
Издательство
литературно-художественных

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСКУССТВ

АРАМ КОЧАРЯН

Материалы научной конференции,
посвященной 100-летию со дня рождения

ИЗДАТЕЛЬСТВО "ТИТУЛОН" НАН РА
ЕРЕВАН 2004

929:78 Գոշաբան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ԶՈՂԱՐՅԱՆ

Ծննդյան 100-ամյակին նվիրված
գիտաժողովի նյութեր

Ա 89048



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

Հրատարակում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիրներ՝ Կ. Խուլարաշյան
Հ. Պիկիչյան

Արամ Քոչարյան. ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Խմբ. Կ. Խուլարաշյան, Հ. Պիկիչյան, Եր., «Գիտություն» հրատ., 2004 թ., էջ 64:

Ժողովածուն կազմվել է կոմպոզիտոր-երաժշտագետ Ա. Քոչարյանի հորելյանական գիտաժողովի նյութերի հիման վրա: Այն ներառում է Ա. Քոչարյանի կյանքին և ստեղծագործական ուղուն, գիտական աշխատություններին նվիրված հոդվածներ, մատենագիտական ցանկ, համերգային ծրագիր:

Գիրքը նախատեսված է երաժշտագետների, ֆոլկորագետների, հայագիտության տարրեր խնդիրներով գրադպող մասնագետների և ընթերցողների լայն շրջանակների համար:

ԽՈՍՀ ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Այս օրերին մենք մեր հարգանքի տուրքն ենք մատուցում Արամ Կարպովիչ Քոչարյանին՝ վաստակաշատ արվեստագետին, զիտնականին, հիանալի մարդուն:

Երևի պետք է խոստվանել, որ իր կյանքի օրոք, կարելի է ավելացնել՝ ոչ միայն կյանքի օրոք, Արամ Քոչարյանն ինչպես հարկն է չի գնահատվել: Պատշաճ ձևով չեն գնահատվել նրա կարողությունները, զիտելիքները, վաստակը, գործը: Նա, կարծես, գտնվում էր ստվերում, մղվում երկրորդ՝ հետին պլան: Կարծես, ինչ-որ առեղծվածային բան կար նրա կյանքում, որ իր իսկ անձի հետ էր կապվում:

Արամ Քոչարյանն ասպարեզ մտավ 20-30-ական թվականներին: Այդ տարիներին Հայաստանում երաժշտագետների թիվը մեծ չէր՝ հազիվ մի քանի հոգի: Սալիմիրոն Մելիքյան, Ռուբեն Թերլեմեզյան, Խորեն Շոռջյան, Մուշեղ Աղայան, Կոստանդին Մելիք-Վրթանեսյան. ահա այն մարդիկ, որոնք թիւ թե շատ ակտիվ գրադկում էին հայ երաժշտության ուսումնասիրման հարցերով:

1933 թ. հանկարծանահ եղավ Սալիմիրոն Մելիքյանը, և մահից անմիջապես հետո սուր քննադատության առարկա դարձան նրա աշխատությունները: Հիշենք 30-ական թվականներին «Խորհրդային արվեստ» ամսագրում ծավալված բանավեճը նրա «Ակնարկ հայ երաժշտության պատմության» գրքի շուրջ:

30-ական թթ. ռեպրեսիաների զրի դարձավ Ռուբեն Թերլեմեզյանը: 40-ականների սկզբին աքսորվեց Կոստանդին Մելիք-Վրթանեսյանը:

Եվ երբ համադրում ենք այս դեպքերը, երկի այնքան էլ տարօրինակ չի թվում 30-ականների սկզբին Արամ Քոչարյանի աքսորն Ալբայ: Աքսորի պատճառն այդպես էլ մեաց ու մնում է անհայտ: Սակայն, կարելու է նաև հիշել մի ուրիշ նման դեպքի մասին: Խոսք 1925 թ. Ռումանոս Մելիքյանի ձերբակալման մասին է, երբ նա գտնվում էր Ստեփանակերտում, ուր եկել էր Երևանուական ուսումնարան հիմնելու նպատակով: Միայն հայտնի բանաստեղծ Հակոբ Հակոբյանի միջամտությունը, որն այն ժամանակ Անդրքեդերացիայի գերազույն մարմանի նախագահն էր, փրկեց Ռումանոս Մելիքյանին: Աստեղանակերտում Ռումանոս Մելիքյանին փոխարինեց Արամ

Քոչարյանը, որ վերջինիս մտերիմներից էր և նրա հետ էր եկել Ստեփանակերտ: Սակայն նա էլ շոտով հարկադրված եղավ հեռանալ Ստեփանակերտից: Բնական հարց է ծագում. արդյոք այդ դարաբաղյան պատմությունների «զորշոփր» չէ՞ր, որ դարձավ Արամ Քոչարյանի աքսորվելու պատճառը և հետո էլ, դեռ երկար տարիներ մթագնում էր նրա կյանքի ընթացքը:

Ինչևէ, բողնենք այդ հարցը հետազարդարանաման համար:

Նշեմ, որ մեր մտավորականների՝ գրականագետների, պատմաբանների, ազգագրագետների շրջանում Արամ Կարպովիչի հեղինակությունը միշտ շատ բարձր է եղել: Բացառություն չէր և Հովհաննի Օքբելին: Մեր գրույցներից մեկի ընթացքում Արամ Կարպովիչը պատմեց, որ մի քանի հանդիպում է ունեցել Օքբելու հետ՝ նորաստեղծ Ավարեմիայում արվեստագիտական կենտրոն ստեղծելու անհրաժեշտության առաջարկով: Դրա անմիջական արդյունքը եղավ 1944 թ. Երաժշտության պատմության և տեսության սեկտորի հիմնադրումը Գիտությունների Ակադեմիայի համակարգում: Քոչարյանը Սեկտորի դեկանարներից էր, ավելի ճիշտ՝ նրա փաստացի դեկանարը: Կարճ ժամանակահատվածում Սեկտորի շուրջ համախմբվեցին մեր երաժշտագիտական մտքի ամենափայլուն դեմքերը՝ Ջր. Քուշնարյուլը, Ալ. Շահվերդյանը, Գ. Տիգրանովը, Ս. Աղայանը:

Ինչպես գիտենք, 1947 թ. Սեկտորը վերանվանվեց Արվեստների պատմության և տեսության սեկտորի, որը 1958 թ. դարձավ Արվեստի ինստիտուտ:

Եվ եթե մի պահ մոռանանք Արամ Կարպովիչի մյուս արժանիքներն ու վաստակը և նշենք միայն այս փաստը՝ նրա վճռական նշանակություն ունեցած դերը Հայաստանում արվեստագիտական կենտրոն ստեղծելու գործում, արդեն իսկ բավական է, որպեսզի Ա. Քոչարյանի անունը միշտ հիշվի խարիս հարգանքով, ակնածանքով ու երախտագիտությամբ:

Արամ Կարպովիչը երկար շվայելեց իր դեկանար պաշտոնը սեկտորում: 40-ական թթ. վերջերին անզիջում պայքար սկսվեց, այսպես կոչված, զաղափարական թշնամիների դեմ: Ոչ անմիջականորեն, սակայն այս ամենը յուրովի անդրադարձավ նաև Արամ Կարպովիչի ճակատագրի վրա: Կուսակցական փաստաթղթերում, մանուկում նրա անունը շշուափվեց, բայց զգացվում էին անորոշ արտահայտված անվատահության, նրա համեմայ կասկածամտության նշանները:

Սահմանական, Արամ Կարպովիչը իրաժարական տվեց և լիովին նվիրվեց գիտական և սուեղծագործական աշխատանքին:

Եթե ես ծանոթացած Արամ Կարպովիչի հետ, 50-ական թվականներն էին, իմ մեջ այնպիսի տպակորություն ստեղծվեց, որ նրա ակտիվ հասարակական կյանքից հեռանալը ոչ միայն որոշ շրջանների ճնշման արդյունք էր, այլև ինչ-որ չափով կապված էր նրա բնավորության, ապրելակերպի, ձեռք բերած կենսափորձի հետ: Թվում էր, թե իրական կյանքն ընթանում է իր հունով, իր ընթացքով, իսկ Արամ Կարպովիչի կյանքն իր ուրույն, սեփական ընթացքն ունի: Նա, կարծես, ապրում էր իր խև սունդած աշխարհում, որ գործում էին յուրահատուկ բարոյական օրենքներ և սեփական պատկերացումներ կյանքի արժեքների մասին: Նա մտերիմների մի նեղ շրջանակ ուներ: Նրանք հաճախ հանդիպում էին սրճարաններում, ուստորաններում (ավանդույթ, որ գախս էր 20-30-ական թվականներից): Այստեղ զրուցում էին, վիճում, անդրադառնում օրվա իրատապ հարցերին:

Արամ Ջոշարյանը վառ անհատականություն էր: Յուրահատուկ էր նրա արտաքինը՝ բարձրահասավ, նիհար, մի քիչ կորացած, արծվաքիթ, խոշոր, ընդգծված վառ ազգային դիմագծերով: Խոսում էր հանգիստ, անշտապ, «պատկաներով»: Միտքն արտահայտում էր առանձին նախադասություններով, ֆրազներով: Զրուցակիցը պետք է «որապը» նրա խոսելաձեկի ալիքը (ինչպես ոռաներն են ասում՝ հած են ելու հաստրության համար և այլու հաստրության համար): Այդպիսի «աֆորիստական» խոսելաձեկը հասուկ էր Արամ Կարպովիչին և անկրկնելի երանգ էր հաղորդում նրա կերպարին:

Նա մեր լավագույն մասնագետն էր ազգային նվազարանների, գուսանա-աշուղական արվեստի ուսումնասիրներն բնագավառներում: Նրա հեղինակությունը հայ ավանդական երաժշտության հետ կապված հարցերում անառարկելի էր: Նրա կազմած գուսանա-աշուղական երգերի ժողովածուն լվաղուց դարձել է բոլոր մասնագետների, և ոչ միայն նեղ մասնագետների, սեղանի գիրքը:

Ավտուս, որ մինչև իման հրատարակված չեն հայ վիպական երգերի, աշուղական սիրավեպերի երաժշտական հատվածների նրա հեղինակած արժեքավոր ժողովածուները, ինչպես և ազգային նվազարաններին նվիրված հիմնական ուսումնասիրությունը: Ինչ էլ անում էր Արամ Կարպովիչը՝ անում էր զարմանալի խնամքով, բժախմողությամբ, խոր իմացությամբ:

Այսպես անշտապ ու հանգիստ, նա անցավ կյանքի իր դժվարին ուղին: Արտաքրուստ՝ հանգիստ: Նա ապրում էր ներքին կյանքով՝ հարուստ ու գեղեցիկ, լի մտորումներով, ստեղծագործական պոռթկումներով, գիտական լորջ ձեռքբերումներով:

Միա այսպիսին է մնացել իմ հիշողություններում Արամ Քոչարյանի անկյունների կերպարը:

Կարինե Խուդարաշյան

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ

(կյանքը և ստեղծագործական ուղին)

Մեր օրերում արդեն հեշտ չէ հանդիպել մարդկանց, որոնք լեկով Արամ Քոչարյանի անունը, կմտարերեն նիհար, բարձրահասակ, դանդաղ և պատկառելի, քավշոտ, ցածր ձայնով խոսող մի մարդու, և ե՛լ ավելի քիչ են նրանք, ովքեր ծանոթ են երաժշտագետի գործունեության ամբողջ ծավալին, գնահատում են նրա դերն ու նշանակությունը:

Եթե ասեմ, որ Արամ Քոչարյանի գործունեությունը նպաստել է մեր՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հիմնադրմանը, շատերը կզարմանան, քանի այդ փաստը հետևողականորեն մոռացության է տրվում:

Այսօր, Արամ Քոչարյանի հարյուրամյակին մենք կուգենայինք հիշել կամ, ավելի շուտ՝ վերիիշել Արամ Քոչարյանին՝ մարդուն, կոմպոզիտորին, երաժշտագետ-ֆոլկլորագետին, հասարակական գործչին:

Հիշատակի տուրք մատուցենք և խոնարհվենք, շնորհակալական խոսք ասենք, ներողություն հայցենք, որ քիչ ջանք ենք ներդրել նրա հիշատակի ու բարի համբավը պահպանելու համար:

Արամ Կարապետի Քոչարյանը ծնվել է 1903 թ. հոկտեմբերի 14-ին Վաղարշապատում ճեմարանի դասախոս Կարապետ Քոչարյանի ընտանիքում: Նրա կնքահայրը էր Կոմիտասը: Դեռևս մանուկ հասակում նրան քահան է վիճակվել շփվել Կոմիտասի հետ, որը հաճախ այցելում էր իր ընկերոց՝ Կարապետ Քոչարյանի ընտանիքին: Արամ Կարապվիշը (այսպես էինք մենք անվանում նրան) մինչև կյանքի վերջը հիշում էր հանդիպումները Կոմիտասի հետ և պարծանքով ասում. «Ես Կոմիտասի ծնկների վրա եմ մեծացել»: Մինչև կյանքի վերջը հիշում էր Կոմիտասի դեկապարած ճեմարանի երգչախմբի հինգությունը և Կոմիտասի ձայնը, երբ երաժշտապետը հոգևոր և ժողովրդական երգեր էր երգում:

Սկզբնական կրթությունն Ա. Քոչարյանը ստացել է Երևանի գլխազիայում՝ իր երաժշտական հակումներն արտահայտելով փողային նվազախմբում նվագելով: Այսուհետև նվազում է Երևանի գիմվորական փողային նվազախմբում, կազմակերպում երգի սիրողական խմբակներ: Մի աճամ, եթե նա ոգևորված դիրիժորի դերում երգախումբ էր դեկավարում՝ «Զափ էր տախ», նրան տեսնում է Ռումանոս Մելիքյանը և խորհուրդ տախս մասնագիտական կրթություն ստանալ նոր ձևավորված երաժշտական ստուժիայում: Ընդունվելով ստուժիա՝ Ա. Քոչարյանը ձեռք է բերում ոչ միայն սկզբնական երաժշտական գիտելիքներ, այլև ուշադիր և հոգատար ուսուցիչ՝ ի դեմս Ռումանոս Մելիքյանի, հետագայում նաև ընկեր և խորհրդատու: Դպրոցը և ստուժիան ավարտելուց հետո Ա. Քոչարյանն աշխատում է Հայաստանի զյուղերում՝ որպես երաժշտության դասատու և խմբավար:

1925 թ. մեկնում է Մոսկվա և ընդունվում Ա. Գլինկայի անվան պետական երաժշտական ուսումնարանի տեսության և կոմպոզիցիայի դասարանը: Ավարտելով այն, 1929 թ. ընդունվում է Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոմսերվատորիայի կոմպոզիտորական ֆակուլտետը, որտեղ ուսանում է լավագույն մասնագիտների՝ Ա. Ալեքսանդրովի, Գ. Լիտինսկու, Վ. Սադովնիչկովի, Գ. Կոնյուսի դասարաններում: Մոսկվայում՝ ուսման տարիներին, շարունակում է դասախոսական և երաժշտահասարակական գործունեությունը: Մասնակցում է Պետական երաժշտագիտական ինստիտուտի, ինչպես և Մոսկվայի հայլական երաժշտական կոլեկտիվի աշխատանքներին (որը գործում էր Հայաստանի մշակույթի տանը), դասավանդում է երաժշտության տեսության առարկաներ Ա. Գլազունովի անվան ուսումնարանում, կազմակերպում երգչախմբեր:

Ամուս ամիսներն անց է կացնում Հայաստանում, տարբեր շրջաններում գիտարշավներ կազմակերպում ու մասնակցում դրանց աշխատանքներին: 1925 թ. Ռումանոս Մելիքյանի հետ այցելում է Լեռնային Ղարաբաղ՝ ժողովրդական երգեր հավաքելու նպատակով:

Այդիսի եռանդուն գործունեությունն աննկատ չէր կարող մնալ պետական որոշ գործիչների «ամենատես» աշխից, և չափազանց ակտիվ ուսանողին 1931 թ. բանտարկում ու աքսորում են Ալբայի երկրամաս: Բայց ալբայան աքսորն էլ ի զորու չէր մարել նախակին ուսանողի եռանդը: Այստեղ նրա ուշադրությունը գրավում է Ալբայոս բնակվող ժողովուրդների երաժշտությունը: Ա. Քոչարյանը ձայնագրում է օյրոբների, խաքասների, տելեսուների երգերը: Դասակարգելով ու

նոտագրելով այդ ճայնագրությունները՝ կազմում է մի ժողովածու, գրու գիտական նախարան և զիրքը հանձնում տեղում գործող բանօպարանին: Հետագայում, երաժշտագետ Բորիս Շովգինը, հրատարակելով իր "Օ մուզակալինոյ կուլտուր ալտայցեв" ուսումնասիրությունն՝ օգտագործում է նաև Արամ Քոչարյանի ճայնագրությունները և հետազոտության արդյունքները, չմոռանալով հիշատակել հեղինակի՝ Ա. Քոչարյանի անունը, բնուքագրելով նրան որպես «ալթայական ժողովրդական երաժշտության խոշորագույն հետազոտող»:

Ալթայում անցկացրած տարիներին Ա. Քոչարյանը չի բավարարվում միայն ֆոլկորագիտական աշխատանքով: Տեղի ուսումնարանում կազմակերպում է երաժշտության բաժին՝ ստանձնելով վարիչի և դասախոսի պաշտոնները: Միաժամանակ ստեղծագործում է՝ գրելով փողային նվագարանների ու փողային նվագախմբի համար և վոկալ ստեղծագործություններ՝ օյրոթական ոճով:

1934 թ. Արամ Քոչարյանն ազատվում է արտորից և վերադառնում Երևան՝ հիվանդ ու հյուծված, սակայն եռանդով լի, միանգամայն չխրատված աքսորի դասերից՝ ազատանիտ ազնվականի կեցվածքով, պահպանելով հումորի զգացորությունը և մտավորականի հիեալները:

Առաջին իսկ օրերից սկսում է իրականացնել իր երազանցները: Որոշում է Հայաստանում երաժշտության և երաժշտագիտության զարգացմանը նվիրել իր ողջ եռանդն ու մասնագիտական ներուժը:

Պետք է ասել, որ արտաքնապես դանդաղաշարժ, դանդաղախոս մարդ լինելով հանդերձ՝ նա լի էր ներքին էներգիայով և ցայտուն ստեղծագործական ու կազմակերպչական հատկություններով: Երբեք բարձրագույն խոսքեր շատերով՝ իսկական հայրենասեր էր: Նրա հայրենասիրությունը չէր արտահայտվում ճառերով և դատարկ խոսակցություններով: Ես երբեք նրանից չեմ լսել «հայրենասիրություն» բառը: Նա նշանակություն չէր տալիս հայերեն, քեզ ուսերեն են խոսում իր շրջապատի նարդիկ կամ ինչ լեզվով են գրում գիտական աշխատանքները: Ինքը փայլուն գիտեր այդ երկու լեզուն և ուսերեն խոսում էր առանց օտար առողանության: Նրա հայրենասիրությունն արտահայտվում էր միայն գործով՝ հանգիստ, հետևողական և նախատակասալաց:

Օժոված կոնապոգիտորի, երաժշտագետի, հասարակական գործչի տաղանդով՝ հսկայական գիտելիքների տեր լինելով, զարմանալիորեն համեստ էր ու զուսպ: Լինելով երաժշտ-ունիվերսալ (ինչպես Քր. Կարա-Մուրզան, Ա. Եկմալյանը, Կոմիտասը)՝ երբեք իր կյանքը,

գործունեությունը, զիտեկիքներն օրինակ չեր բերում: Պահպանելով իր ներքին ազատությունը՝ երբեք չեր ճնշում դիմացինի ազատությանը: Նրա հետ ունեցած հաղորդակցությունից կարելի էր ոչ միայն մասնագիտական, այլև վարվելաձևի դասեր ստանալ:

Եվ այսպիսով, վերադառնալով Երևան, նա սկսում է իրագործել իր նախագծերը: Առաջին հերթին Երևանի կոնսերվատորիայում հիմնադրում է հայ երաժշտության ամբիոն, որտեղ դասավանդում է 10 տարի: Այնուհետև, 1934 թ. կոնսերվատորիայում հիմնադրում է Երաժշտական զիտահետազոտական կարինետը, որն անվանում է իր սիրելի ուսուցչի և ընկերոջ՝ Ռոմանոս Մելիքյանի անվանքը: Ըստ Ա. Քոչարյանի կազմած ծրագրի՝ Կարինետի նախատակն էր Հայաստանում հիմնել հայ երաժշտության հավաքնան, ուսումնասիրնան, իրավարական պետական կենտրոն:

1938 թ. Կարինետն անցնում է Արվեստի գործերի վարչության հովանավորության տակ, 1944 թ. վերանվանվում՝ ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի երաժշտության պատմության և տեսության սեկտոր (ղեկավար՝ քր. Քոչնարյան, զիտքարտուղար՝ Ա. Քոչարյան): 1958 թ. կրկին վերանվանվում է՝ կոչվերս ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Արվեստի Ինստիտուտ (տնօրեն՝ Ռ. Զարյան):

Թու ինչ է արել Արամ Քոչարյանը կարինետի վարիչի, այնուհետև սեկտորի զիտական քարտուղարի պաշտոններում՝ կարելի է երկար պատմել, բայց մենք կիրքենքը սահմանափակվել միայն հիմնական վաստերը նշելով.

1. Գիտական արշավներ Հայաստանի տարրեր շրջաններում՝ հայ ժողովրդական և աշուղական երգեր ու նվազներ հավաքելու նախատակով:
2. «Հնչող» ձայնադարանի ստեղծում. երգերն ու նվազները գրանցվում են ունետակ ժապավենի վրա՝ պարզունակ մագնիսոֆոնի միջոցով: Այսպես հիմնադրվեց Արվեստի ինստիտուտի ներկայիս հարուստ ու բազմաժանր ձայնադարանը:
3. Հայ երաժիշտների (կոմպոզիտորների, երաժշտական գործիչների, երաժշտագետների) ստեղծագործությունների ձեռագրերի հավաքում, որի արդյունքը դարձավ ներկայիս Ե. Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի երաժշտության բաժնի արխիվի հիմնադրումը: Հավաքվում և դասակարգվում էին S.

Չովաճյանի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Քր. Կարա-Մուրզայի, Սպ. Մելիքյանի, Ռ. Մելիքյանի, Ալ. Սպենդիարյանի ձեռագլերը:

4. Ժողովրդական նվազարանների հավաքում, դասակարգում և ուսումնասիրություն:

5. Երաժշտագետ կաղըերի պատրաստում: Կարինետի և սեկտորի աշխատանքների մեջ ներգրավվում են հայ անվանի երաժշտութերը և երաժշտագետները՝ Մ. Աղայան, Գ. Լևոնյան, Ա. Հովհաննիսյան, Ռ. Թերլեմեզյան, Ալ. Շահվերդյան, Քր. Քոչնարյան, Ս. Բարխուդարյան, Ա. Տեր-Ղևոնյան, Գ. Տիգրանով, պարագետ՝ Սրբ. Լիսիցյան:

6. Պարբերաբար կազմակերպվում էին գիտական համաժողովներ: Կապեր էին հաստատվում Վրաստանի, Աղքածանի, Ռուսաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների հետ:

Կարինետի կնիք – խորհրդանշով (գրիֆ) լրյու տեսան Արամ Քոչարյանի “Արմենական ժողովության մասին” (Մ.-Լ., 1939), Կոմիտասի «Հովվածներ և ուսումնասիրություններ» (Երևան, 1941), Գ. Լևոնյանի «Աշուունները և նրանց արվեստը», (1944) գրքերը, Ալ. Սպենդիարյանի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորները (Երևան, 1943), հայ գուսանական և աշուունական երգերի ժողովածուները: Կարինետում հավաքված նյութերի հիման վրա են գրվել Ալ. Շահվերդյանի «Ակնարկներ 19-20-րդ դդ. հայ երաժշտության պատմության», նույն հեղինակի «Կոմիտաս» մենագրությունները, Հ. Հովհաննիսյանի «Հայ երաժշտության պատմությունը» (ձեռագիրը գտնվում է Ե. Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի երաժշտական արխիվում): Մեկտորում աշխատելու շրջանում (1943-1949 թթ.) Քր. Քոչնարյանը սկսեց գրել իր կապիտալ մենագրությունը՝ “Вопросы истории и теории армянской монодимической музыки”: Կարինետում և սեկտորում սկսեցին աշխատանքը երաժշտագետներ Մարթոս Սուրադյանը, Ռոբերտ Արայանը, Քնարիկ Գրիգորյանը, Մարգարիտ Հարությունյանը, Մարգարիտ Բրուտյանը:

Քառասնական թվականների վերջին ինչ որ մի ձեռք ընդհատեց Արամ Քոչարյանի այսպիսի բեղմնավոր հասարակական գործունեությունը: Թե ո՞վ էր դրա հեղինակը, Արամ Կարպովիչը երբեք չէր ասում: Նեղացած, անգամ վիրավորված մնաց մինչև կյանքի վերջը: Բայց ո՞չ չարացած կամ ոխակալ: Նա վեհանձն ոգի ուներ. զգիտեմ անգամ, հավատացյալ էր թէ՞ ոչ, բայց իր բարությանը, անդիսակալությանը՝ իսկական քրիստոնեա էր: Նա, պարզապես

ինքնապարփակվեց և իր ողջ եռամուն ուղղեց դեպի կոմպոզիտորական և գիտական ստեղծագործության ասպարեզ։ Գրեց և պաշտպանեց (1965) թեկնածուական ատենախոսությունը՝ «Հարվածային և փողային ժողովրդական երաժշտական գործիքները Հայաստանում»։ Կազմեց մի հսկայական ժողովածու-ուսումնասիրություն՝ «Հայ վիպական երգեր» և ժողովածու՝ «Հայ աշուղական սիրավեպեր»։ Կազմեց և հրատարակեց ևս մի ժողովածու-ուսումնասիրություն՝ «Հայ գուանական երգեր»։ Անգամ այս աշխատությունների վերնագրերը խոսում են ֆոլկլորագիտության ասպարեզում Արամ Քոչարյանի խորը և բազմաժանր հետազոտական գործունեության մասին։

Լինելով Կոմիտասի երկրպագուն և համարելով իրեն Կոմիտասի աշակերտը՝ նա ստեղծագործաբար է մոտեցել Կոմիտասի ավանդույթներին՝ ուսումնասիրել հայ ավանդական / ժողովրդական երաժշտությունն իր բոլոր ճյուղերով, տեսակներով, ժանրերով։ Անդրադարձել է հատկապես այն ճյուղերին, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս էին մնացել Կոմիտասի ուշադրության ոլորտից՝ գուանական, աշուղական երգ, վիպական երգեր (ճիշտ է, Կոմիտասը ճայնագրել է այս երգերը, բայց դրանց նվիրված հատուկ ուսումնասիրություն չի գրել), ժողովրդական նվագարաններ (Կոմիտասը գրել է միայն մի քանիսի մասին)։ Այսինքն, եթե Կոմիտասի ուսումնասիրությունների կենտրոնում հայ գեղջուկ երաժշտությունն էր, ապա Ա. Քոչարյանին գրավեց ժողովրդական երաժշտության այն ճյուղը, որ նա անվանում էր «այրոֆեսիոնալ երաժշտություն» (տե՛ս, A. Կոչարյան "Արմենակա հարօնիա մuzыка", 1939, с.19), իսկ այժմ, մասնագետներն անվանում են ժողովրդապրֆեսիոնալ կամ քանակոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտություն։ Եվ սա է Արամ Քոչարյանի հսկայական ու դեռևս զգնահատված ներդրումը հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ։ Ավելին, դա համարձակ քայլ էր, որովհետու հակատակ էր ավանդապահների հայեցակետին, որոնք կարծում էին, թե միայն գեղջուկ երաժշտությունն է մարուր հայկականը, իսկ մնացածը՝ օտարենի ազդեցության արդյունք։ Կոմիտասը և Մ. Արենյանը¹ նույն կարծիքն ունեին, բայց ո՞վ կարող է պնդել, թե նրանք անխաղական էին, եթե դուրս էին մորուն աշուղական երգն ու անտեսում մեր կենցաղում տարածված որոշ ավանդական նվագարաններ։ Պարզապես, Կոմիտասն ասկում էր այնպիսի դարաշրջանում (19-րդ դ. վերջ-20-րդ դ.

¹ Մ. Արենյան, Հայոց լեզվի տաղաջափություն (մետրիկ), Երևան, 1933, էջ 299-302:

սկիզբ), երբ ժողովրդական արվեստի բոլոր գիտակները և ուսումնասիրողները (հիշենք Բելա Բարոնովին, Զոլտան Կողային) զուտ ազգային էին համարում միայն գեղջկական երաժշտությունը:

Հայ երաժիշտները, աստվածացնելով Կոմիտասին, կուրորեան հետևում էին նրա բոլոր ասածներին: Եվ միայն Արամ Քոչարյանն էր, որը համարձակորեն հետո իր առաջին հրատարակած աշխատության մեջ՝ “Արմահակա հարօնա մոզեկա”, ճշմարտացի բնորոշեց ու գնահատեց աշուղներին, գոտնաշխներին, սազանդարներին և նրանց արվեստը, որպես պրոֆեսիոնալ, զբելով. «Պրոֆեսիոնալ երաժշտության կրողներն են վիապասանները, գուսանները, աշուղները, գոտնաշխները, սազանդարները»²: Մանրամասնորեն հետազոտեց և գրեց նրանց արվեստի մասին՝ դասելով հայ ավանդական երաժշտության ոլորտում: Եվ հետազոտմ իր ուշադրությունն ուղղեց այդ ավանդական երաժշտության ուսումնասիրության վրա՝ ապացուելով և հաստատելով, որ հայ ժողովրդականը ոչ միայն գեղջկական երգն է, այլև աշուղականը: Ըստ նրա, հայերի միջավայրում օգտագործվող նվազարաններն, անկախ իրենց ծագումից, հայ ավանդական նվազարանային արվեստի անքակտելի մասն են: Դրանով նա ներդրեց հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ նի նոր՝ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության ուսումնասիրնան ուղրություն: Եվ եթե այժմ ազատորեն գրվում և հրատարակվում են գիտական աշխատանքներ՝ նվիրված հայ աշուղական երգերին, հայ սիրավեսին, հայոց նվազարաններին և անզամ հայկական միջավայրում տարածված մոլումներին, և ոչ ոք չի ասում (կամ ասում են միայն անտեղյակները), որ դրանք հայկական չեն և օտար են մեր ժողովրդի մտածողությանը՝ դա Արամ Քոչարյանի վաստակն է: Եվ ավելացնեմ զգնահատված վաստակը, քանզի Արամ Քոչարյանին հաջողվեց իր աշխատություններից միայն երկու գիրք և մի քանի հորված հրատարակել: Ինչ որ մի շար ճեղք հետ էր ուղղում Ակադեմիայի հրատարակչությունից նրա պատրաստած ծավալուն աշխատանքները: Թե ո՞վ օգտվեց որանից զգիտեմ...

Երկի այդ աշխատանքների ճակատագիրն էր՝ ձեռագիր մնալ ու դրանով հարված հասցնել հայ երաժշտական ֆոլկորագիտության զարգացմանը։ Դրանով իսկ, հայկական ֆոլկորի կարևոր ճյուղերի և

² А. Кочарян, Армянская народная музыка, Общий обзор, Гос. муз. изд-во, М.-Л. 1939, стр 19.

ժամերի զիտական ներկայացումն ու նեկարանումը հեռու մնաց լայն հասարակության ուշադրությունից՝ բույլ տարրվ օտարերին կրղոպտել և կեղծել մեր ազգային հարստությունը։ Համենայն դեպք, ինչպես ասում են, «Ճեռագլուխը չեն այրվում»։ Սպասենք լավ ժամանակների...

Փորձենք պարզապես թվարկել Արամ Քոչարյանի մյուս ֆոլկլորագիտական աշխատանքները։ Դրանք են՝ 2000 ձայնագրված ժողովրդական, աշուղական երգային ու նվազարանային երաժշտության նմուշներ, որոնցից մեր ձայնադրանում պահպանվել են միայն 1000-ը. մնացյալի ճակատագիրն անհայտ է։ Այս ձայնագրություններն Արվեստի ինստիտուտի ձայնադրանի ուսկե ֆոնդն են։ Դրանց մի մասը՝ վիշպական, ժողովրդական, աշուղական երգեր ու նվազներ, հեղինակը Վերծանել և ժողովածուներ է կազմել։ Ասենք, որ փայլուն երաժշտական ընդունակությունների շնորհիվ՝ Արամ Կարպովիչն իր Վերծանություններում (առողջություն կամ ձայնակավառակից ու մազնիստովնից) նոտագրման կատարյալ ճշգրտության էր հասնում։ Նա մշակել է ժողովրդական երգերի մեղեղական և կատարման առանձնահատկություններն արտացոլող նշանների մի համակարգ, որը զարմանալիորեն արդիական է նաև մեր օրերում։

Շարունակենք թվարկումը. հրատարակել է 2 գիրք, որոնց մասին խոսեցինք վերը։ ԽՍՀՄ ժողովրդությունների ազգային նվազարաններին նվիրված հանրահայտ ատլասում³ գրել է հայկական նվազարաններին պատկանող բաժինը։ Հողմանական բերթերում, ամսագրերում, հանրագիտարաններում։

Եվ վերջապես, Արամ Քոչարյան կոմպոզիտոր. «Տերն ու ծառան» օպերայի հեղինակ, որը բեմադրության շարժանացավ։ Գրել է նաև «Կանտա», «Սյուս», երգեր, ողոմանամեր, որոնց թվում հայկական խմբերգերի գոհարը՝ «Նախշուն արիրը», ժողովրդական երգերի մշակումներ, այինսեր հորոյի, ջուրակի, բավզութակի համար։ Թվարկված բոլոր ստեղծագործություններին բնորոշ են ազգային երաժշտական լեզվի խորը զիտակցությունն ու եվրոպական կոմպոզիտորական տեխնիկայի պրոֆեսիոնալ տիրապետումը։ Նրա ստեղծագործությունները մեր օրերում չեն կատարվում... Ասում են. «...Պատմությունն ամեն բան իր տեղը կրնի», բայց ես կարծում եմ, որ

³ К. Верткив, Г. Благодатов, Э. Язовицкая, Атлас музыкальных инструментов народов СССР, М. 1963 г.

պատմությունը նման է նազերով մի տիկնոց, որը գերծ չէ հիշողության արգելակման հաճախակի նոպաներից... Ուրեմն, շարժե միայն հույսը պատմության վրա դնել. Վորձենք մեր սեփական ուժերով ուսումնավրեւ, զնահատել, հիշատակի տուրք մատուցել և պաշտել անցյալի մեր վաստակաշատ գործիշներին:

Մարգարիտ Սարգսյան

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ՝ ԸՍՏ ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՅՆԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ժողովրդական արվեստի բաժնի ճայնադարանն ունի հարուստ, գիտական խոշոր արժեք ներկայացնող ֆոնդեր, որոնց շարքում առանձնանում է Արամ Քոչարյանի հավաքածուն:

Նախ, նշված հավաքածուն, ճայնագրված նմուշների քանակի առումով, ծավալուն է. ավանդական երգերի ու նվազների շուրջ 924 նմուշ:

Երկրորդ՝ այն ամենավաղ հնչյունային գրանցումներից է: Զայնագրություններն արվել են 1932-1942 թվականներին ընկած ժամանակաշրջանում՝ հիմնականում Ապարանում և Երևանում: Տեղ են գտել նաև ավելի վաղ արված ճայնագրություններ. 12 եզակի նմուշ (թիվ 94 տուփ) Կոմիտասի, Արմենակ Շահնուրադյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Մանուկ Աղայանի և Ռոբերտ Թերլեմեզյանի կատարմանք: Նմուշները ճայնագրվել են 1932թ.: Ամենայն հավանականությամբ, դրանք վերաձայնագրված են ազգային ուսուցչության կողմանից: Ենթադրությունը հիմնվում է այն պարզ փաստի վրա, որ գոնե Կոմիտասը չէր կարող ճայնագրվել 1932 թ.:

Հավաքածուն ընդգրկում է հայկական ժողովրդական երգերի ու նվազների երաժշտական գրեթե բոլոր ժանրերը: Գեղջկական ճյուղը պարտնակում է 330 նմուշ, որտեղ գերակշռում են պարերգերը՝ 166 նմուշ, սիրերգերը՝ 67 նմուշ և ծիսական-հարսանեկանները՝ 27 նմուշ: Գեղջկական մյուս ժանրերը՝ պանդսության, աշխատանքային, զինվորագրության, կատակային-երգիծական, ողբի և լացի, գովիճի, բնարական, օրորոցային. ներկայացված են քիչ, բայց բարձրարժեք նմուշներով: Գրանցված է նաև 17 օրինակ հոգևոր և 27՝ քաղաքային

Երգարվեստից: Այսուհանդերձ, քանակային առումով ամենամեծաթիվն աշուղական երգերն են՝ 259 նմուշ, որից 47-ը աշուղական տարբեր սիրավեպերից հատվածներ են (Քյոռողի, Աշուղ Դարիք): Սնացյալը, հիմնականում աշուղական սիրերգեր են, ավելի սակավաթիվը՝ գովեր, խոհական և խրատական ժանրին պատկանող ստեղծագործություններ: Կան նաև աշուղական հայրենասիրական և զինվորագրության ժանրի նմուշներ:

Հավաքածուի աներքելի արժեքներից է այն երևույթը, որ աշուղական երգերը ծայնագրվել են ոչ միայն անհայտ քանասացների, այլև հենց իրենց՝ աշուղների կատարմամբ: Հարկ է նշել Շահեն Սարգսյանի (հետագայում՝ գուսան Շահեն) հիմնայի կատարումները՝ 38 նմուշ (ի դեպ ոչ միայն աշուղական ժանրի երգերի, տուփ 81-14 նմ., տուփ 82-5 նմ., տուփ 89-15 նմ., տուփ 106-1 նմ., տուփ 108-1 նմ., տուփ 115-1 նմ., տուփ 119-1 նմ.): Հավաքածուում տեղ են գտել նաև 19-20-րդ դդ. հանրահայտ աշուղներ Ջիվանու (տուփ 109-1 նմ.), Շերամի (տուփ 104-1 նմ.), Հավասու (տուփ 84-19 նմ., տուփ 117-1 նմ. տուփ 119-6 նմ.), Սադափու (տուփ 80-1 նմ., տուփ 84-3 նմ., տուփ 88-4 նմ.), Սադրիսի (տուփ 82-4 նմ., տուփ 106-1 նմ.), Եգորի (տուփ 85-5 նմ., տուփ 86-2 նմ., տուփ 108-3 նմ.), և Մահմադի (տուփ 88-12 նմ., տուփ 89-3 նմ.) կատարումները, որոնք առաջին հերթին արժեքավորվելու են որպես երաժշտական մշակույթի պատմության վավերագրեր:

Ֆոնդում աշուղական երգարվեստի մի յուրահատուկ մեկնաբանություն է հենց իր՝ Ա. Քոչարյանի կատարմամբ Ջիվանու «Զախորդ օրեր» հանրահայտ երգի ծայնագրությունը, որտեղ գագակում է անվանի երաժշտագետի պրոֆեսիոնալ վերաբերմունքն աշուղական խոհավիճակի հայտապահական ժանրի նկատմամբ: Որպես երգիչ-քանասաց, Ա. Քոչարյանն ունկնդրին նորովի է ներկայացնում այս ժանրը՝ աղերսերվ հայոց հնագույն վիաթերգերին (հնմտ. «Սաման ծոեր» եպոսից գողորմիների ծայնագրյալ նմուշների հետ):

Այս ինաստով, դժվար է գերազանահատել այն ծայնագրությունների արժեքը, որոնք անմահացել են ժամանակի առաջնակարգ երաժշտների կատարումները, ինչպիսիք են քամանչահարներ Լևոն Կարախանը (65 նույամի կատարում՝ տուփ 109-113, տուփ 119, տուփ 125), Սաշա Օգանեզաշվիլին (4 նմուշ՝ տուփ 102, 103), Ա. Օգանեզաշվիլին և քառահար Բալա Մելիքյանը (տուփ 104-1 նմ.), Բալա Մելիքյանի մենանվագները (տուփ 102-2 նմ.), ուղահար Սողոմոն

Ա 44
Հ 29048



Այթունյանը և քանոնահար Արշավիր Ֆիրզույլանը (տոսի 114-2 նմ.), Ա. Ֆիրզույլանի մենակատարումները (10 մուղամ՝ տոսի 114 և 125):

Քացառիկ նմուշներ են Մարգար Մարգարյանի դեկավարած դրույկահարների անսամբլի կատարումները՝ 29 նմուշի մենանվագային ձայնագրություն (տոսի 95-4 նմ., տոսի 96-14 նմ., տոսի 106-1նմ., տոսի 107-2 նմ., տոսի 109-7նմ., տոսի 125-1նմ.) և իննը նմուշ՝ ձայնագրված տարրեր երգչ-երգչուիհների հետ միասին (տոսի 107):

Թվարկած հայունի անունների կողքին անհրաժեշտ է նշել մասնագետների լայն շրջաններին անհայտ, բայց բարձրակարգ երաժիշտներ՝ դրույկահար և դիոլահար Գալուստ և Գարեգին Հովսեփյանների անունները: Ապարանի (ծագումով շատախիցի) այս երաժիշտները կատարել են 31 հայկական պարենանակ, որոնցից տասնմեկը եղակի նմուշներ են, գրեթե մոռացված, հնագույն պարատեսակներ, մասնագիտական առումով՝ անգնահատելի նյոթ (տոսի 91-3 նմ., տոսի 92-18 նմ., տոսի 93-10նմ.): Հետազայում այս երաժիշտների կատարումները տեղ են գտել նաև Սրբ. Լիսիցյանի հավաքածուում:

Նվազարանային նմուշներից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև «Ոչխարի կանչի» տարրեր կատարումները՝ 18 նմուշ: Իրեն միևնույն ժամբի տարրերակներ Ա. Զոշարյանը դրանք հավաքել, ձայնագրել է մեկ ձայններիցի վրա՝ տոսի 99:

Հավաքածուում նվազարանային և աշուղական կատարումների այսպիսի առատությունն ու բազմազանությունը պատահական չէ: Գիտնականի քեկնածուական ատենախոսությունը և մի շարք աշխատություններ նվիրված են հենց այս բնագավառների զանազան հարցերի ուսումնասիրմանը:

Այսուհետեւ, հավաքածուում նոյնքան կարևորված և առատորեն են ներկայացված երգային տարրեր ժամբեր: Արդեն նշվեց աշուղական երգերի և դրանց կատարումների մասին: Գալով գեղջկական տարրեր ժամբերի երգերին, կարելի է առանձնացնել այն բանասացների անունները, որոնք անգնահատելի երաժշտական նմուշներ են ավանդել սերունդներին:

Այսպես, Ապարանում կատարված ձայնագրությունները՝ (111 նմուշ, տոսի 77-80), առավելապես պարերգեր են և աշուղական երգեր: Ընդ որում, ապարանից 8 բանասացից 4-ը միևնույն ընտանիքից են՝ Հալաջողյան երեք քույր և մեկ երգայրը: Քույրերը կատարել են 58 պարերգ և մի բանի այլ ժամբերի նմուշներ: Սրանք խմբական

Երգեցողության տիպական օրինակներ են, բոլորը հայերեն լեզվով: Իսկ ելքայրը կատարել է միայն աշուղական երգեր՝ քրդերեն: Սա ընդամենը մի օրինակ է, որ փաստում է, թե միևնույն ընտանիքի տարրեր անդամներն ինչպիսի նախասիրություններ կարող են ունենալ՝ կախված տարիքից, սեռից, աշխատանքի բնույթից, մշջավայրից և այլն: Ապարանում Ա. Քոչարյանը ձայնագրել է հավաքածովի լավագույն հոռովելներից 4-ը, հարսանեկան ծիսական երգերից 9-ը և մեկ ողբ:

Պատմական և երաժշտագիտական առումով ուշագրավ է ծագումով ալաշկերտցի Արշակ Սարգսյանը: Հատկապես արժեքավոր են սազի նվազակցությամբ նրա կատարումները: Հաշվի առնենք, որ մեր օլերում սազ նվազողներն ակնհայտորեն սակավաբիկ են և գործիքը գրեթե նորացնան եզրին է: Այս բանասացին ևս հետազայտմ ձայնագրել է Սրբուհի Լիսիցյանը և իր «Հայ ժողովրդի հինավորց պարերը և բատերական ներկայացումները» ուսերեն աշխատության առաջին հատորում Ա. Սարգսյանին ներկայացրել իբրև աշուտ:

Ա. Քոչարյան բանահավաքի հայտնագործությունն են եզակի բանասացներից ծագումով շատախսի Ջիրայիլ Զեղոն, որի կատարմամբ «Սասնա ծոեր» եպոսի 12 երգվող հատվածներն անզնահատելի են թե՛ գիտական, և թե՛ մշակութարանական դիտանկյունով: Ծագումով ալաշկերտցի Միսիքար Թումոյանը, ծագումով բիթիսից Նորինը, որոնց ներկայացրած տարրեր ժամանելի բազմաթիվ երգերն աչքի են ընկնում ինքնատիպ կատարումներով և բանահյուսական երաժշտամտածողության տեսանկյունից խիստ ուշագրավ են, ևս դասվում են վերոհիշյալ շարքին: Ի դեպ, վերջին չորս բանասացը՝ Ա. Սարգսյանը, Զ. Զեղոն, Մ. Թումոյանը և Նորինը կատարել են այսօր արդեն կենցաղից գրեթե դուրս եկած հարսանեկան բազմորագովերի հրաշալի նմուշներ: Հետաքրքի և արժեքավոր նյոթ է գրանցել ծագումով բերկիցից բանասաց Մովսես Տեր-Հովհաննիսյանը: Նա երգել է 118 տարրեր ժամանի երգ, որոնցից 45-ը՝ պարերգ, 34-ը՝ հատված «Աշուու Ղարիք» և «Չահ Խամայիք» աշուղական սիրավեպերից, ինչպես նաև տարաբնույթ այլ ժամաների նմուշներ: Ուշագրավ է, որ 118-ից 61-ը բանասացը կատարել է քրդերեն: Սա ևս մի կարևոր հանգանակ է, որ ավելի է արժեքում Ա. Քոչարյանի հավաքածուն և բնորշում նրան իբրև ճշմարիտ բանահավաք և գիտական:

Օտարալեզու կատարումները՝ քրդերեն, թուրքերեն, աղրբեցաներեն և վրացերեն, հավաքածուի անքակտելի մասն են, թե՛ համեմատական երաժշտական բանահյուսության, թե՛ Հայաստանում

տարածված երաժշտական մշակույթի բազմերանգ պատկերի բացահայտման ու զիտական քննության առումով։ Բոլորովին զարմանալի չէ, որ այդ երգերը ճայնագրվել են թե՛ հայ, թե՛ այլազգի բանասացներից։ Վերջինս հնարավորություն է ընձեռում երաժշտագետներին ու ազգագրագետներին համեմատական վերլուծության ենթարկել տարրեր ազգերի կատարողական արվեստի իմքնատիպությունն ու երաժշտական ընկալումները՝ երաժշտական լեզվամտածողության, կատարման կերպի ավանդույթի և փոխառնչությունների առումով։ Այլազգի բանասացներից նշենք Մաջիք Բեյրութովի և Շամիլի, Խմախլ Արդուլլակի, Դավիթ Սաֆարովի, Բարաջինի, Արանե Ալբոյի, Ահմադ Չոլոյի, Կարիլյագրի-Օղլու, Օզմանե Լազգիի, և այլոց անունները (սուսի 102, 103, 104, 116), ինչպես նաև քուրդ մեծանուն գրող Հաջիե Զնոլիի արտասանությամբ բանահյուսական տեքստի մեկ նմուշ՝ սուսի 116։

Հավաքածուի կարևոր արժեքներից է նաև այն իրողությունը, որ ներկայացված են Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարրեր ազգագրական գոտիները, շրջանները, Վրաստանի և Աղբեջանի հայարնակ վայրերը՝ Ծալկա (Ջավախ), Կիրովարան, Շամիսր (Ուտիք) և այլն։

Անփոփելով, հարկ է ևս մեկ անգամ փաստել Արամ Քոչարյանի ավանդական երգերի ու նվազների հագվազյուտ հավաքածուի զիտական և պատմամշակության բարձր արժեքը։

Այն անկասկած կարող է իրեւ սկզբնաղբյուր ծառայել հայագիտության և երաժշտագիտության տարրեր ոլորտների հետազոտությունների համար։ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնում այս ուղղությամբ լրաց աշխատանքներ են կատարվել. վերծանվել է 300-ից ավել նմուշի նույտային և բանաստեղծական տեքստ (աշխատանքը կատարել են զիտաշխատողներ՝ Զ. Թագակյանը, Դ. Դանիելյանը, Ա. Մուրադյանը, Մ. Սարգսյանը և Հ. Պիկիչյանը)։

Պատրաստվել է հավաքածուի բարտարանի համակարգչային տարրերակը, որի ծրագիրը կազմել է զիտաշխատող Դ. Թումանյանը։ Վերծանված երգերի ու նվազների հիմնա վրա կազմվում են ժանրային-թեմատիկ ժողովածուներ, որոնք անգնահատելի ենրդրում կիհնեն հայ երաժշտական ֆոլկորագիտության ուսումնամիջության և տարածման ծիրում։ Սակայն, միայն ժողովրդական երաժշտության բաժնի ջանքերով հնարավոր չէ վերծանված ու կանոնակարգված հավաքածուն

Երաժշտագետների ու երաժշտակերների սեփականությունը դարձնել: Վաղուց արդեն հասունացել է այդ երաժշտական հուշարձանների գիտական հրատարակման խնդիրը, որ պատիվ կրերի յուրաքանչյուր քաղաքակիրք հասարակության:

Հոփփումն Պիկիչյան

ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արվեստի ինստիտուտի ճայնադարանում պահպող Ա. Քոչարյանի ֆոնն առանձնանում է ավանդական նվազարանների եզակի կատարումների հավաքածուով: Ժամբային, թեմատիկ հարատությունից զատ, այն արժեորդում է նաև 20-րդ դարի առաջին կեսերին Հայաստանում ու Անդրկովկաստում հայտնի նվազածու վարպետների աստղաբարձրությունում, որոնցից շատերի կատարումն այսօր էլ իհացնում է նվազարանին տիրապետելու տեխնիկայի կատարելությամբ և նյութի գեղագիտական ընկալման ու մատուցման ինքնատիպությամբ: Այսպիսի հավաքածու ստեղծելու, անկանու կած, անկանու երաժշտագետի մասնագիտական մտահորիզոնի ու լայն հետաքրքրությունների վկայությունն է:

Հայտնի է, որ նրա թեկնածուական ատենախոսությունը նվիրված էր հայկական ժողովրդական նվազարաններին: Մինչ ատենախոսության պաշտպանությունը, Ա. Քոչարյանը հրատարակել է «Ժողովրդական գործիքների զարգացման հիմնական Էտապները» հոդվածը, որտեղ ուրվագծում է հայկական ժողովրդական նվազարանների ձևավորման ու զարգացման ընթացքը²: Մեկ տարի անց՝ 1939 թ. հրատարակում է «Հայկական ժողովրդական երաժշտություն»³ գրքույթը, և ի շարու հայ ավանդական երաժշտության վոկալ և նվազարանային ճյուղերի ընդիանուր նկարագրի, երաժշտագիտական քննության է առնում նաև նվազարանային արվեստը՝ հստկապես ժողովրդական նվազարանները: Դրանք հիմնականում դիտարկվում են հայ ժողովրդի կյանքում երաժշտաբանական ու նվազարանային ավանդույթի

² «Խորհրդային արվեստ», Երևան, 1938, թ. 4:

³ Արմանսկայ նարուական մանաւագության հայության մասին առաջնային արվեստ»:

համատեքստում՝ ժողովրդական ասացողների ու նվազածուների, գուսանների, աշուղների, սազանաբների մշակութային շերտի միահյուսմամբ։ Հեղինակն առանձնահատուկ ուշադրության է արժանացնում նաև խորհրդային տարիների երաժշտական կյանքի կազմակերպմանն ու ընդիանուր պատկերի բացահայտմանը՝ անդրադառնալով ժողովրդական նվազարանների արտադրության, անսամբլային ու նվազախմբային երաժշտության զարգացման առանձնահատկությունների, համերգային գործունեության, երաժշտական խմբակների, ինչպես նաև մասնագիտական կայրերի պատրաստումն ու ժողովրդական երաժշտության ոլորտում կոմպոզիտորական դպրոցի ներգրավման հարցերին։

Ավելի ուշ տպագրել է «Միափող սրինգ»⁴ և «Երաժշտական գործիքները Հայաստանում. փողային խումբ»⁵ հոդվածները։ Այս աշխատանքներում արդեն, աղբյուրագիտական, հնագիտական, պատկերագրական, ազգագրական, երաժշտական նյութերի և ժողովրդական ու արհեստավարժ երաժշտների նվազարանների շահագրությունների ու կատարողական վարպետության հնարանքների նկարագրման և օգտագործման հիման վրա, ներկայացնում է Հայաստանում կենցաղավարող փողային նվազարանները, վերլուծում դրանց ծագմանն ու կատարողական ավանդույթին առնչվող խնդիրները։

Ա. Քոչարյանն է հեղինակել նաև «Խորհրդային Միության ժողովուրդների նվազարանների ատլաս»⁶ գրքի հայկական նվազարաններին նվիրված բաժինը (էջ 87-92), որտեղ նկարագրվում և երաժշտագիտորեն բնութագրվում են ժողովրդական աղմկային, հարկանային, փողային, լարային ընտանիքների նվազարանների բոլոր տիպերն (ժողովրդական և սյորֆեսիոնալ) ու տեսակները։

Սովորաբար Ասիայի ու Կովկասի տարրեր ժողովուրդների մշակույթներին հարազատ «արևելյան» կոչվող այն նվազարանների բնութագրման ժամանակ, որ դարեր ի վեր հայոց կյանքի բաղկացուցիչն են, վաստակաշատ գիտնականը ջանում է հատկապես ներկայացնել դրանց հայկական բնութագրիչները (հումք, տեխնոլոգիա, կառուցվածք, հնչյունաշար, կատարման տեխնիկա, երկացանկ, տոնածիսական կյանքի մասնակցություն, ժողովրդական և մասնագիտական

⁴ ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտութ., Երևան, 1962, թ. 11:

⁵ Պատմա-քանախիրական հանդես, Երևան, 1963, թ. 3:

⁶ К. Вертков, Г. Благодатов, Э. Язовицкая, Атлас музыкальных инструментов народов СССР, М. 1963 г.

տերմինաբանություն), որը հնարավորություն է ընձեռում ըստ էության խոսելու բուն նվազարանային ավանդույթի ու համաշխարհային մշակույթում մեր ժողովրդի ներդրման մասին:

«Հայկական Սովետական Հանրագիտարանում» գետեղված ժողովրդական նվազարաններին նվիրված բառահորդվածների զգալի մասը ևս պատկանում է անվանի գիտնականի գրչին:

Թեկնածուական ատենախոսությունը, որ կրում էր «Հարկանային ու փողային ժողովրդական գործիքները Հայաստանում» խորագիրը, պաշտպանել է 1965 թ.:

Հեղինակի հավաստմամբ, աշխատանքը բաղկացած է երկու գրքից: Առաջին գլուխը նրա գիտական ուսումնասիրությունն է (326 մերենազիր էջ), երկրորդը՝ կազմված է 137 լուսանկարից: Ցավոք, լուսանկարների գիրքը մեզ չի հաջողվել գտնել: Մեր դիտարկումները հիմնվում են ատենախոսության մերենազրված տարրերակներից մեկի վրա:

Աշխատանքը կազմված է նախարանից, երկու գլխից և վերջաբանից: Առաջին գլուխը նվիրված է հարկանային նվազարաններին, երկրորդը՝ փողայիններին: Ընդունված կարգի համաձայն, ատենախոսական աշխատանքն ավարտվում է օգտագործված գրականության ցանկով, որը ներառում է 58 հայերեն, 48 ռուսերեն և 10 անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով հրատարակությունների մատենագիտական տվյալներ՝ իրեն հեղինակի մասնագիտական տեսադաշտի ու պրապուն մտքի առհավատշախ:

Յորաքանչյուր գլուխ սկսվում է պատմական ակնարկով, որից հետո մանրամասնորեն քննության ներ առնվում տվյալ ընտանիքի նվազարանների բոլոր տեսակները, ինչպես և օժանդակ միջոցները:

Այսպէս, հեղինակը հարկանայինների շարքում թմրուկները տիպաքանում է ըստ նվազարանի կառուցվածքի, ձևի, հումքի և քաղանքի քանակի: Ժողովրդական և պրոֆեսիոնալ վարպետներից գրառված նյութերի, սեփական դիտարկումների և գրականության տվյալների հիման վրա՝ նկարագրում է միարադանք (դափ, նաղարա) և երկարագություն (թմբուկ, գոս) նվազարանների կառուցվածքը և պատրաստման տեխնիկան: Նույն վարպետներին հիշատակելով՝ ներկայացնում է նվագելու ժողովրդական ու արիեստավարժ եղանակները: Նոտաներով և սխեմատիկ օրինակներով ցույց է տալիս հարկանային նվազարանների հնչյունածավալը և ամենատարածված ոիքմական պատկերները:

Ժամանակի եվրոպական ու ռուսական երաժշտագիտական մտքին համամիտ՝ հեղինակն օժանդակների մեջ, դիտարկում է բոլոր այն միջոցները, որոնց շնորհիվ կարելի է ձայն արտաքերել և ոդրմիկ պատկեր ստեղծել: Վերջիններիս շարքում դասակարգում է մարդու մարմնի մասերը, որպես ձայնարտաքերման միջոց. ձեռքեր՝ միմյանց հարվածից արտաքերվող ծափ, մատներ՝ բջի ու միջնամասի շփումից լսվող չքոց, ուորեր՝ գետնին հարվածելոց առաջացած թակոց:

«Բնության պարագաների» մեջ, իրեն ձայնարտաքերման միջոցներ է ներկայացնում նաև խխունջները, փայտի կտորները, քարերը: «Կենցաղային պարագաների» մեջ՝ ափսեները, շշերը, դողանջող քասերը և այլն: Հայաստանի պատմության պետական թանգարանի հավաքածուներից առանձնացնում է իննը պինձե թաս, ձայնագրում դրանց հնչողությունը, ապա նոտագիր օրինակով ի ցույց քերում հնչյունային բարձրությունը՝ համեմատելով Էրմիտաժի ուրարտական հավաքածուի հոչակավոր թասերի հետ:

Աղմկային գործիքների շարքում քննարկում է ժողովրդի տոնական-ծիսական ավանդույթում տարածված նվազարաններից կարկաչան, շաշխականը, ճոռիկը, եռանկյունը և չաղանան, փաստելով, որ վերջիններիս գործառնության ոլորտն աստիճանաբար նվազում է:

Աղմկային-հարկանային նվազարանների մեջ է դասակարգում նաև դողանջող գործիքները՝ բոժոժ, ծնծղա, քշոց, կոչնակ, զանգ, գոնգ, որ առավելապես հայտնի էին իրեն հոգևոր ավանդույթի երաժշտական ծիսակարգի բաղկացուցիչներ: Տարաբնույթ օրինակների շարքում՝ Մոսկայի Կրեմլի զանգերի դողանջների ձայնագրության նոտագիր տարրերակը համադրում է Երևանի քաղաքային ժամացույցի դողանջների ձայնագրության նոտագրյալ նմուշին: Բերկած նույշները զուգորդում է նաև դասական երաժշտության մեջ բազմիցս կիրառվող զանգերի գործառույթով, տեսակներով ու հնչողությամբ:

Երկրորդ գիտում փողային նվազարանները դասակարգում է ըստ կառուցվածքի՝ մունշչոտուկային (եղջրափող, մետաղյա փողեր, գալարափող), սրնագային (թռչնաձև սրինգ, բազմափող սրինգ, միափող սրինգ, հովվական նվազարաններ, բութակ-սրասրինգ-շվի), լեզվակային ընտանիքներին պատկանողներ (պկու, պարկապղուկ), զույգ լեզվակային նվազարաններ (դուդուկ, զոտնա): Փողային նվազարանների պատմա-տեսական մասին կցում է յուրաքանչյուր նվազարանի տիպի և առանձին տեսակների ճշգրիտ չափագրությունը. պատմական՝ «իին նվազարաններ» և ժամանակակից կտրվածքներով: Առանձին աղյուսակներով

ներկայացնում է նվազաքանի ճայնաշարը, հնչյունածավալը և հնչարտաքերման կարգը՝ մատների դիրքի համաձայն: Գիտական ու կատարողական բարեխորությամբ բացատրում է նվազելու մասնագիտական հմտություններն՝ ըստ ժողովրդական վարպետներից գրառադաշտության: Հնարավորության սահմաններում նվազարանների ուսումնասիրությունը կատարում է զյուղ > քաղաք, ժողովրդական > արհեստավարժ կտրկածքներով, համեմատում Արևելյան և Արևմտյան Հայաստանի նվազարանային ավանդույթի շատ տարրորոշչիներ:

Ուշագրավ է Ա. Քոչարյան-Երաժշտագետի մոտեցումը նվազարանների այս երկու խոշոր ընտանիքների հայաստանյան պատկերը բացահայտելու առումով: Նկատենք, որ հեղինակը քաջատեղյակ է Հայաստանում, Խորհրդային Սրբությունում և արտասահմանում հրատարակված այս ողբուի աշխատանքներին և ձգտել է իր գործը ևս կառուցել ժամանակի առաջադեմ փորձը տեղայնացնելով: Ասվածի վավերագիրն է աշխատանքի վերջում ներկայացված գրականության ցանքը, որտեղ ներառված են տարբեր երկրներում հրատարակված հայերեն և օտարալեզու մասնագիտական արժեքավոր ուսումնասիրություններ և աղբյուրներ:

Յուրաքանչյուր զյուղ և բաժին սկսվում է տվյալ ընտանիքի նվազարանի (կամ վերջինիս տեսակի) ծագումնաբանական խնդիրների քննությամբ: Նվազարանի ծագումը կապվում է հասարակության զարգացման հետ՝ փորձ է արվում հնարավոր գուգահեռների շնորհիվ ճշտել դրանց գործառության, կենցաղակարնան պայմաններն ու փոխանությունները: Հեղինակն առաջնորդվում է համեմատական երաժշտագիտության մերողների ընձեռած հնարավորություններով: Զգուս է բացահայտել նվազարանների պատրաստման հոմքի, կառուցվածքի, դրանցով պայմանագրության հնչարտաքերման, հնչյունածավալի ու ճայնաշարի, երկացանկի հնարավորություններն ու առանձնահատկությունները: Դիտարկում է նաև նվազարանի անվան գրական, ժողովրդախոսակցական և օտարալեզու (հունարեն, պարսկերեն, արաբերեն, բուրգերեն, ռուսերեն, իտալերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, չինարեն և գրականությունից հայտնի բոլոր հնարավոր լեզուները) տերմինաբանության օրինաչափություններն ու տարրերություններն աշխարհի ժողովրդների մշակույթներում: Երաժշտագիտական խնդիրներին բնորոշ հարցադրումները զուգակցում են նաև այլ հումանիտար գիտությունների՝ դիցարանության, ազգաբանության, հնագիտության, աղբյուրագիտության, գեղարվեստական

գրականության (Ռաֆիկ, Հովհ. Հովհաննիայան, Ավ. Խսահակյան, Պ. Սևակ, Վ. Հյուզը և այլք), մանրանկարչության և կիրառական արվեստի ընձեռած տվյալներով: Նվագարանը քննության է առնում տարածքային-աշխարհագրական, ժամանակային, ընկերային (սոցիալական) կտրվածքներով:

Փողային նվագարաններից յուրաքանչյուրին հատկացված բաժնում գետեղում է իր ճայնագրյալ հավաքածուի սեփական վերծանությունները, որի շնորհիվ տեսական նյութն ավելի ճշգրիտ ու ընկալելի է դառնում: Եթե հիշենք, որ աշխատանքի երկրորդ գիրքն ամբողջությամբ կազմված էր փաստագրական լուսանկարներից⁷ ու գծանկարներից, ապա կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի մանրակրկիտ ու տքնածան աշխատանք է կատարել հեղինակը:

Խոստովանենք, որ հայ ավանդական նվագարաններին նվիրված համապարփակ ուսումնասիրություն մինչև օրս չի հրապարակվել, թեև սուսանձին նվագարաններին ու դրանց ընտանիքներին նվիրված բազմաթիվ աշխատանքներ են տպագրվել: Հայաստանում կենցաղավարող նվագարանային այս երկու ընտանիքներին նվիրված Արամ Քոչարյանի ուսումնասիրությունն իր տեսակի մեջ առ այսօր գերազանցված չէ, թեև որոշակի խմբագրման և ծանոթագրությունների համարնան կարիք ունի: Ամենայն հավանականությամբ, ատենախոսությունը պետք է հրատարակվեր իրքու մենագրություն, որն ինչ-ինչ պատճառներով չիրականացավ:

Հիշյալ նախարանից, հեղինակի ճայնադարանային ֆոնդի հավաքածուից, մուկովյան և երևանյան հանրագիտարանային հրատարակություններից, ինչպես նաև «Հայաստանի երաժշտական գործիքները» հոդվածաշարից⁸ կարելի է ենթադրել, որ Ա. Քոչարյանը նվաստակադրվել էր ուսումնասիրությունը շարունակել նաև Հայաստանում տարածված լարային ընտանիքի նվագարանների ներգրավմամբ, որի մասին ցավոք որևէ այլ փաստ չունենք:

Կարծում ենք, մեր երաժշտագիտության մեջ վաղուց արդեն հասունացել է հայ ավանդական նվագարանների համակողմանի ուսումնասիրության և հրատարակման սպիտակ էջը լրացնելու խնդիրը:

⁷ Ազգագրագետ-պարագետ Ժ. Խաչատրյանի կարծիքով, Ա. Քոչարյանի հավաքած լուսանկարների մի մասը հետագայում հրատարակվել է Սրբ. Լիսիցյանի գրքում: Տե՛ս Ծրբ. Լիսիցյան, Старинные пляски и театральные представления армянского народа, տ. 1, 2, Ереван, 1985.

⁸ «Գիտություն և տեխնիկա», Երևան, 1970, թ. 1, 2, 12:

Այսու՝ տաղանդավոր երաժշտագետի տույն աշխատանքը տպագրելն անհրաժեշտություն է: Մենագրությունը տպագրելիս, անկասկած, պետք է որոշակի խմբագրական աշխատանք կատարել՝ հավելելով այն արդի գիտական պահանջներին համահունչ ծանրքագրումներով: Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունն ավելի կլարենտը, եթե զրքին կցվեն հեղինակի ֆոնդային հավաքածուի ձայնագրությունների ընտրանիմ՝ լսզերային սկավառակների միջոցով, նույային վերծանություններն ու լուսանկարները: Վստահ ենք, որ բարի կամքի առկայության և բոլոր նախանձախնդիր մարդկանց ջանքերի միավորման պարագայում՝ այն իրագործելն անհնար չէ:

Ժամեն Սնհրաբյան

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՀԱՅ ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԲԱՆԱՀԱՎԱՔ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտխորհուրդը դեռևս Արամ Քոչարյանի կենդանության օրոք ձեռնարկեց հայ գուսանական երգերին նվիրված նրա աշխատության հրապարակումը¹: Միևնույն ժամանակ ինստիտուտի տնօրինությունը որոշում կայացրեց կարգավորել և հրատարակել մեծավաստակ կոմպոզիտոր-երաժշտագետի ձեռագիր աշխատությունները: Այդ մտադրությունը մասսամբ իրագործվեց Ա. Քոչարյանի մսիից հետո, երբ հրատարակման պատրաստվեց նրա «Եջեր հայ վիպական երգաստեղծությունից» ծավալուն ուսումնասիրությունը: Գիրքը ներառում էր նաև իր՝ Արամ Կարպովիչի կողմից խնամքով արտագրած 53 օրինակից կազմված նույային հավելվածը:

Այս զրքով նախատեսվում էր սկսել Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի «Հայ ավանդական երաժշտության մատենաշարը», (զիսավոր խմբագիր՝ Կ. Սարգսյան-Խուլդաբաշյան): Մատենաշարի հատորները պիտի հրապարակվեին երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն: ամբողջ տեքստը, ներառյալ՝ երգերը: Այդպես էլ կազմակերպվեց Ա. Քոչարյանի զրքի վրա տարվող աշխատանքը: Քարգմանվեց տեքստը, հեղինակի նախարանը և Վերջաբանը, խմբագրի «Երկու խոսքը», երգերի բանաստեղծական

¹ Հայ գուսանական երգեր, Երևան, 1976թ.:

տեքստերը, գիտական ծանոթագրությունները և գրքի ամփոփումը: Տավոք, հրապարակումը չկայացավ, քանզի մինչ տպարանում հերթը կհասներ Ա. Քոչարյանի գրքին, եկան նոր՝ «շուկայական հարաբերությունների» ժամանակները, և հրատարակության հեռանկարն ավելի հեռացավ...

Արամ Կարպովիչը երկի պատահական չեր դիմել վիպական երգաստեղծությանը, քանի որ, էպիկականը նրա եռթյունն էր: Մեծ հոգու տեր մարդ էր, վեհանձն արտաքինով և հանդիսավոր կեցվածքով: Վիպական երգերի հերոսների զգացմունքները հոգեհարազատ էին իրեն և մտովի ներքափակցելով մեզանից բաժանող ահուելի ժամանակաշրջանի միջով՝ նա, կարծեք, հավասարապես վերապրում էր թե նրանց ցավը, թե՝ ուրախությունը:

Սինջև Կ. Խուդաբաշյանին և տողերիս հեղինակին հասնելը, Արամ Կարպովիչի աշխատությունն անցել էր Նիկոլոս Թահմիզյանի խիստ քննադատական գրչի տակով, որի հետևանքով բնազրի ահազին հատված կրճատվել էր: Գործի հետ ծանոթանալուց հետո, մեր առաջին խնդիրներից էր հնարավորինս վերականգնել և լսելի դարձնել հեղինակի քավ, հորդոր ձայնը, որ սիրով ներկայացնում էր իր հեռավոր հերոսներին:

Երբեք ժողովրդական երաժշտության նվիրյալ՝ Ա. Քոչարյանը երթեք չի հավաքել Այուքը սոսկ քանակի համար, այլ զգացել է դրա իրական արժեքը և հասկացել եռթյունը: Բանահավաքչական նպատակապաց գործունեության շնորհիվ նա կարողացավ հավաքել, ի մի բերել և ներկայացնել հայ ժողովրդական երգերի, արևելյան ժողովրդական նվազարանային երաժշտության, գուսանական և վիպական երգաստեղծության, աշուղական սիրավեպերի հարյուրավոր բարձրարժեք նմուշներ, ինչպես նաև ժողովրդական վիպասացերգիների բազմերանգ և բարձրաճաշակ արվեստը: Այլ հարց է, որ գրեթե բոլոր այդ բովանդակ գործերը մնացել են ձեռագիր վիճակում և սպասում են իրենց հրապարակմանը:

Անցնենք բուն բովանդակությանը: Նշենք, որ «Էջեր հայ վիպական երգաստեղծությունից» զիրքն ունի դասական կառուցվածք, այսինքն՝ նախարան, վիպական երգարվեստի նմուշներ, վերջարան, ամփոփում, ծանոթագրություններ, բառարան և օգտագործած գրականության ցանկ: Խոբագիրների կողմից նաև ավելացվել է աղյուսակ, որտեղ նշված են երգի ծագման և ծայնագրման վայրը, կատարողը և նոտագրողը:

Գրքի նախաբանում Ա. Զոշարյանը դասակարգում և բնութագրում է ներկայացվող օրինակներն՝ ընդգծելով հատկապես հայ վիպերգության բնորոշ առանձնահատկությունները:

Փորձենք դիտարկել հայ վիպական երգատեղությունն ըստ Ա. Զոշարյանի ուսումնասիրության: Տարբեր ժողովուրդների պատմական հիշողության մեջ պահպանվել և մինչև մեր օրերն են հասել, այսպես կոչված, վիպական երգեր, որտեղ նկարագրվում և փառարանվում են տվյալ ժողովրդի արքաների կամ հերոսների սիրանքները: Այդպիսին են համաշխարհային համբավ ունեցող «Երգ Հայավատի մասին», «Երգ Ռուսնդի մասին», «Երգ Նիդելոնգների մասին» և շատ այլ վիպերգեր կամ էպոսներ: Հետոաքրքիր է, որ բոլոր այս էպոսների վերնագրերում կա «Երգ» բառը, թեև միշտ չէ, որ տեղեկություններ են պահպանվել, դրանցում տեղ գտած երգերի մասին: Այդ տեսակեսուից ավելի բարենպաստ պայմաններում են հայկական վիպական երգերը և էպոսը, քանի որ երգել և մինչև օրս էլ երգվում են: Ըստ որում, ոչ ծավալուն վիպական երգերը՝ օրինակ «Մոնկաց Միրզան» կամ «Կարսո խաչը», երգել են սկզբից մինչև վերջ, իսկ ավելի ընթարձակները, ինչպիսին է, «Սասնա ծոեր» էպոսը՝ հատվածաբար: Ավելացնենք նաև, որ մեր հին վեպերում երաժշտությունը հաճախ ներբափանցում է բուն սյուժե: Օրինակ, «Պարսից պատերազմը» վիպասանքում, նշվում է, որ «...հայոց քաջավոր Արշակը... վարձակների (կին գուսանների) երգերի մեջ քաջ և արի էր երևում»², կամ հիշենք «Սասնա ծոեր» էպոսի «Սասունցի Դավիթ» ճյուղում Սիերի հոչակավոր «աազն ու պղոր փողը», Սասնա աղջիկների երգն ու պարը Դավթին կրվի դաշտ ճանապարհելիս և այլն:

Համընդիանուր էին նաև վիպական երգերի ծագման հանգամանքները: Բանագետները դրանք կապում են «զայաց երգերի» հետ, որ հանդիսավոր հուղարկավորությունների ժամանակ վարձու կանայք էին կատարում: Ողբասաց կամ ծայնարկու կանայք, վարպետորնեն ներկայացնելով սուզը, միաժամանակ զովերգում էին հանգուցյալի իրական կամ վերագրվող արժանիքները: «Զայնարկուների երգը և նրա հետ կապված զրոյցը՝ եղել են վեայի սկզբնական աղբյուրները»³:

Ժողովրդական բանահյուսության այս կորողները չեն սահմանափակվում իրենց ծննդավայրով, այլ դառնում են համամարդկային մշակութային երևոյթ: Այդպիսին է նաև հայ

² Ա. Արեյյան, Երկեր, հ. Ա. Երևան, 1966, էջ 494:

³ Նոյն տեղում, էջ 489:

Ժողովրդական բանահյուսության գլուխգործոցը՝ «Սամա ծոեր» էպոսը, որի գոյության հազարամյակն ամբողջ աշխարհում մեծ հանդիսությամբ նշվեց 1939 թ.:

Մեր պատմիչները, բազմաքիլ տեղեկություններ են քողել ժողովրդական վիպերգության վերաբերյալ, սակայն, երաժիշտ շինելով՝ ակամա դրանց նկարագրական բնույթ են հաղորդել:

Հայ վիպական երաժշտության ձայնագրման և ուսումնասիրման գործը սկսվել է 19-րդ դարի վերջերին՝ Կոմիտասի ջանքերով, ապա շարունակվել նրա հետևորդների կողմից:

Գրքի նախաբանում Ա. Քոչարյանը հանգամանորեն ամդրադատնում է նաև այն երաժշտագետների աշխատություններին, որոնք հավաքել և ուսումնասիրել են հայ վիպերգության մասունքները: Դրանք են. Սա. Մելիքյանի «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության», Քր. Քոչնարյանի «Вопросы истории и теории армянской монодимической музыки», Ալ. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկները», Մ. Մուրադյանի «Հայ երաժշտությունը 19-րդ և 20-րդ դ. դարասկզբում», Ն. Թահմաջյանի «Քննական տեսություն հայոց հին ու միջնադարյան երաժշտության պատմության» արժեքավոր աշխատությունները, որտեղ սպակայն, հայ վիպերգության հարցերը հեղինակների ընդհանուր ուսումնասիրության միայն մի մասն են կազմել: Այս հարցին ավելի մանրամասնորեն է ամդրադարձել Հ. Հովհաննիսյանն իր «Հայ երաժշտության պատմություն» ձեռագիր աշխատության մեջ⁴, որտեղ ևս ընդգծում է, որ պատմաբանները հիմնականում կենտրոնացել են նյութի պատմական կողմի վրա, որի շնորհիվ մեզ ավելի շատ են հասել վիպատասական, քան` քննարերգական երգերը:

Եվ այդ երգերից կարելի է տեղեկություններ քաղել թե՛ հայ ժողովրդի պատմության, թե՛ որոշ հին տոհմերի անունների ու վայրերի ծագման մասին: Հ. Հովհաննիսյանը նաև տեսական ու տաղաշափական վերլուծություն է կատարում քննության առնելով «Մոկաց Միրզայի» մեղեղին և «Սասունցի Դավթի» երաժշտական օրինակներից հինգ հատված: Նշենք, որ Սա. Մելիքյանը նույնական ուսումնասիրել է հիշյալ էպոսը և վերլուծել երգվող «Զողորմինների» երեք տարրերակ, ինչպես նաև հանրահայտ «Մոկաց Միրզա» վիպերգը:

⁴ Հակոբ Հովհաննիսյան, Հայ երաժշտության պատմություն, էջ 11, ձեռ., Եղիշե Չարենցի անվ. Գրականության և արվեստի բանագրան (այսուհետև՝ ԳԱԲ):

Սեր պատմիչների, հատկապես Մովսես Խորենացու մոտ, հաճախ ենք հանդիպում վիպերգերի կատարումը բնորոշող տերմինների. դրանք են՝ «քուելեաց», «ձայնիվ» կամ «ի ձայն ասել» և «երգ ասել» արտահայտությունները:

Հայկական վիպերգերն, ըստ Ս. Աբեղյանի, ունեցել են ազատ հանգավորում և ավելի մոտ են եղել չափածոյին, քան արձակին, հատկապես, դրամատիկական պարուսով հսգեցած հերոսական վեպերում⁵: Կատարողական այս արվեստին տիրապետող արհեստավարժ վարպետներն, անշուշտ, օժտված են եղել թե՛ թատերական և թե՛ երաժշտական ուսակություններով, լիովին տիրապետել են վիպասանության արվեստին և իրենց երաժշտերն ուղեցել են որևէ լարային նվազարանի (տավլի, քնար, քամքիռն, վին, սագ) նվազակցությամբ:

Ուշ միջնադարում վարպետ կատարողների թիվն աստիճանաբար նվազեց: Նրանց փոխարիմնեցին ոչ արհեստավարժ ասացողները, որոնք վեպերի չափածո մասերը հետզհետև վերածեցին արձակի, երգվար հատվածներն՝ արտասանության, թեև երգով վիպելու ավանդույթն ամրողությամբ չվերացավ⁶: Գործիքային նվազակցությունը ևս սկսեց նվազել: Ընդ որում «երգային ոստանավորները... ավելի լավ են պահպանվել, քան թե արձակը, քանի որ հնությունից են գալիս, ավելի դժվար են փոփոխության ենթարկվել և ավելի երկար են պահում իրենց նախնական ձևը»⁷: Երգային հատվածներն աստիճանաբար պակասում են, պահպանվում են միայն հերոսների կրողից երգվողները և «Չողորմիները»: Վերջիններս հնչում են որպես նախերգանք կամ վերջարան՝ ի պատիվ վեալի հերոսների, վարպետ վիպասանի, ինչպես և ունկնդիր նախնիների հոգու⁸:

Ոչ բոլոր վիպասացների անուններն են պահպանվել ցայսօր: Սակայն, շնորհալիներից շատերի անունները հայտնի են նույնիսկ հետավոր բնակավայրերում: Դրանցից երև և ճանաչված վիպասաց Բագկե Շահինը՝ Շահեն Բագիկյանը, որի կատարողական արվեստի մասին հետաքրքիր հուշեր է պատմում նրա եղբորորդին՝ գրականագետ Սահակ Բագիկյանը, «Բագկե Շահինի երգապատումը» հոդվածում⁹:

⁵ Ս. Աբեղյան, Երկեր, հ.Ա, Երևան, 1966, էջ 484-485:

⁶ Ա. Քոչարյան, Եջեր հայ վիպական երգաստեղությունից, էջ 5, 9:

⁷ Ս. Աբեղյան, Երկեր, հ.Ա, Երևան, 1966, էջ 486:

⁸ Նույն տեղում, էջ 482, 483:

⁹ Բագկե Շահինի երգապատումը, «Հայրենիքի ձայն», Խ-դեկտ., Երևան, 1974:

«Նա եպոսը կատարում էր երգելով, անկրկնելի դիմախաղի ու ծայներանգների, նաև անհրաժեշտ ձեռնաժետերի միջոցով, թավ ու շոյող դրանատիզմով և քնարերգությամբ, երգիծանքի ու հումորի անօրինակ ձևերի ցուցադրումով»: Սահակ Բագիկյանն ընդգծում է, որ Բաղկե Շահինը եպոսը սկզբից մինչև վերջ էր երգում: Աս, այդ ծավալուն վիպերգը «ծայրից ծայր» երգելու մասին, մեզ հասած միակ արժանահավատ վկայությունն է: Տեղացի ու տարբեր վայրերից ժամանած ունկնդիմների հոծ բազմության մեջ քիչ չկն նաև այնախփ, որ կարողանում էին ընդօրինակել ու տարածել Շահինի արվեստը: Նրա հետևողներից էին Ռազը Մուրադյանը, Ավո և Մամուչյակ Զարդյանները, Ազիզ Ղարիբյանը, Զերո Ջիբրայիլյանը (Ջիբրայիլ Զերո) և ուրիշները: Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը նրանցից է գրի առել «Սաման ծոեր» եպոսի առանձին ճյուղերի տարրերակները, որ տեղ են գտել 1936 թ. հետարարակության մեջ: Բայց զարմանալիորեն, Շահինին հետևող վիպասացներից ոչ մեկը, նոյնիսկ Շատախի նույն գյուղից եկած Հայրիկ Մուրադյանը կամ Ավո Զարդյանը չեն երգել վեպը սկզբից մինչև վերջ, այլ՝ միայն առանձին հատվածները: Մ. Արենյանն այն կարծիքն էր, որ վեպը երբեմ չի երգվել ամբողջությամբ, սակայն ընդունում էր, որ ավելի վաղ շրջանում երգվող հատվածներն ավելի շատ են եղել¹⁰:

Ա. Քոչարյանի ծայնագրյալ ֆոնդում պահպանվել է նաև եպոսի Դավիթ ճյուղն ամբողջությամբ՝ անվանի Ժողովրդական վարպետ-վիպասաց Զերո Ջիբրայիլյանի կատարմանը: Դա Արվեստի ինստիտուտի ծայնադարձանում պահպանված եպոսի միակ ամբողջական հնայտնային տարրերակն է: Սակայն ցավոք, նախորդների նման, Զերոն ևս վեպը հատվածաբար է երգում:

Վկավերգերի դասակարգման հարցում Ա. Քոչարյանն առաջնորդվել է Մ. Արենյանի առաջարկած ժամանակագրական համակարգով, այն է՝ հնագույն ժամանակներից մինչև ներկան: Այդպիսով, Ա. Քոչարյանը երգերը խմբավորել է ըստ 6 շարքի՝ դիցարանական, դյուցագնական, պատմա-հերոսական, կրոնական, վիպա-քնարական և երգիծական: Վերջին շարքը, թեև վաղ պատմական շրջանի գոյացություն է, այնուամենայնիվ, խիստ առանձնանում է նախորդ շարքերից իր զվարճակի բնույթով, մինչդեռ առաջինից հինգերորդ շարքի երգերում աճում է անհատի հուզականությունը:

¹⁰ Սաման ծոեր, խմբագրեց՝ Մ. Արենյան, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936:

Ժողովածուում ընդգրկված են ոչ միայն իր՝ Ա. Քոչարյանի, այլև հայ անվանի երաժշտագետ-բանահավաքներ Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Վ. Սամվելյանի և այլցո հավաքած նյութերը՝ ստեղծելով հայ վիպերգության համապարփակ և միասնական պատկեր: Ա. Քոչարյանի հավաքած ու ձայնագրած նյութերը զգալիորեն լրացրեցին և ընդլայնեցին վիպերգերի մասին մինչ այդ եղած տեղեկությունները, ավելի հստակ դարձրին այդ երգերի դասակարգումը, ընդգրկելով լայն ժամանակաշրջան՝ վաղ պատմականից մինչև 16-17-րդ դդ.:

Ժողովածուի առաջին՝ «Դիցարանական շարքում» ներկայացված են նախապատմական և վաղ պատմական շրջանից մեզ հասած երգեր, որ վերագրվում են Արա Գեղեցիկի և Շամիրամի, մյուս մասը՝ Արտաշեսի առասպելներին: Մովսես Խորենացու գրառած Շամիրամի առասպելում պայտականներից մեկը բազուհու վգից խրում, փախցնում է նրա հուսութք-ովունքը և ծովը գցում, ինքն էլ նետվելով ջուրը՝ փորձում է խուսափել բազուհու զայրույքից: Ուլունքները կորցնելով, Շամիրամը քար է դառնում¹¹: Սպ. Մելիքյանը, Քր. Քոչնարյանը, Ա. Քոչարյանը, Ն. Թահմիզյանն այդ առասպելի հետքերը տեսնում են որոշ ժողովրդական պարերգերում հիմնվելով 6/8 չափի, քայլակային կառուցվածքի և նման բովանդակության վրա: Դրանցից են «Ծամբելիկ», «Ծամերոս ծանրդութեննեն», «Ծանդր ու թփի», «Զինչ ու զինչ» և Վանա շրջակայրից ծագած նման այլ հանրահայտ պարերգերը: Դրանք կատակային երկխոսություն են աղջկա և տղայի միջև: Աղջիկը տղային խնդրում է ջրից հանել իր ծամբելը՝ փոխարենն առաջարկելով իր զարդերը և հագուստը: Բայց տղան չի համաձայնվում, մինչև աղջիկը խոստանում է իր «Երված սրտիկը»: Այստեղ երևում է առասպելի նախնական իմաստի վերափոխված տարրերակը, քանզի ուլունքը վերածված է ծամբելի, իսկ Շամիրամի զայրույքը՝ աղջկա և տղայի կատակային խաղի: Ավելացնենք, որ այս երգերի մասին կա և այլ կարծիք, որն արտահայտված է Սրբ. Լիսիցիանի և Կ. Խուդաբաշյանի հետազոտումներում¹²:

¹¹ Ա. Արելյան նույն տեղում, էջ 70-71:

¹² Срб. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, Ереван, 1972, т. II, с.244; Կ. Խուդաբաշյան, Անահիտ դիցուհու պաշտամունքի երաժշտաբանաստեղծական վերապրուկները: «Պար երաժշտություն» Սրբ. Լիսիցյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 53-61: Համաձայն այս կարծիքի վերիիշյալ երգերը Անահիտ դիցուհու պաշտամունքին առնչվող ծիսական պարերգեր են, որ

Նոյն այս շարքում ներկայացված է Արտավագդի ողբը՝ Արտաշես Բ-ի առասպեկտից, որը ևս ժամանակի ընթացքում վերափոխության է ներարկվել, ընդ որում Արտավագդի ավանդական «զար» կերպարի փոխարեն մեր առջև հանում է համակրելի մի երիտասարդ, որը ողբում է իր անձնանելի վիճակը:¹³

Աշխատության երկրորդ՝ «Դյուցազնական շարքը», «Սասնա ծոեր» վիպերգի «Սասունցի Դավիթ» ճյուղն է. վիպերգության ամենակատարյալ մասը թե՛ գրական և թե՛ երաժշտական տեսանկյունից: «Սասունցի Դավիթ» վեպի երաժշտական դրվագները ներկայացված են 20 նմուշով, որից չորսը գրի է առել Կոմիտասը, երկուսը՝ Սա. Մելիքյանը, մեկը՝ Վ. Սամվելյանը և տասներեքը՝ Ա. Քոչարյանը: Սա արդեն պատկառելի քանակ է, որպեսզի վեպի երաժշտական պատկերն ավելի լիակատար դառնաւ:¹⁴ «Վեպի բոլոր եղանակները, այդ թվում «Զողորմիները», ծայնազրված են տարբեր երաժիշտների կողմից, տարբեր կատարողներից և տարբեր ժամանակներում ... պատահականորեն և հապենապ ... անօամ չեն հասցել գրի առնել նրանց լիրկ տեքստերը: Սակայն նյութերի դասակարգումից հետո ստացվեց այնպիսի մի ամբողջություն, որ կարծես, մեկը մյուսի շարունակությունը լինի», - գրում է Ա. Քոչարյանն իր ուսումնապիրության մեջ¹⁵: Եվ իրոք, իրար ետևից հնչում են հանդիսավոր, լայնաշունչ «Զողորմիները»՝ հերթով փառարանելով յուրաքանչյուր ճյուղի հերոսներին: Ամբողջականության տպավորության ստեղծմանը նպաստում է նաև բոլոր բանասացների ծագումը՝ Վասպուրական, Մոկս, Շատախ: Բոլոր երգվող հատվածները, կարծեք, ծնվել են «Զողորմիներից», որպես «վիպերգա-դյուցազներգական մեղղային հիմք»¹⁶: Փակագծերում ավելացնենք երաժշտագետ

կատարվում էին հերանոսական տաճարում սրբազն ամուսնությանը նախորդող քրոնիու ծխական մերկացման արարողության ընթացքում:

¹³ Ա. Քոչարյան, Եջեր հայ վիպական երգաստեղծությունից, էջ 34:

¹⁴ Կոմիտասի նոտագրումներից «Սասնա ծոեր» էպոսի 13 երգվող օրինակ է իրատարակել երաժշտագետ Ռ. Արայանը. տե՛ս, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 2000 և 8 տարբերակ է գրանցրել երաժշտագետ-բանահավաք Ա. Փակելանյանը. տե՛ս, Ա. Սահակյան, Ա. Փակելանյան, «Սասնա ծոեր դյուցազնավեպ», Փաստենա, 1996, էջ 117-122: Հիշյալ գրքում հեղինակները իրատարակել են նաև կոմիտասյան 13 օրինակը:

¹⁵ Ա. Քոչարյան, նոյն տեղում, էջ 44:

¹⁶ Ա. Սահակյան, Առասպելական ընթերք և վիպական կառույց, տե՛ս, «Սասնա ծոեր դյուցազնավեպ», Փաստենա, 1996, էջ 13, 9-րդ հղում:

Ա.Փակլամբյանի դիտողությունը, որ «Էպոսի երգվող հատվածները ամենեն էլ երգեր չեն ժամանակին առումով, այլ ասացման ձև, միջոց, եղանակ, որը կոչված է ուժեղացնելու, ընդգծելու էպոսի կատարման հոեսորական պարուր»¹⁷:

Ա. Քոչարյանը ջերմությամբ է բնութագրում այս քանասացներին՝ բարձր գնահատելով նրանց բնածին երաժշտականությունը: Նա շեշտում է, որ անգամ տարեց հասակում, ասացողները կարողացել են ամրողությամբ իիշել և փոխանցել հայոց ժողովրդական վեպը՝ եռանդով ու ակնածանքով:

Երրորդ՝ «Պատճառ-հերոսական» շարքն ընդգրկում է վիպերգերի երկու խոսք. առաջինը՝ «Մոլաց Միրզայի» երկու տարրերակն է, և երկրորդը՝ «Վարդանանց շարքի» չորս երգը: «Մոլաց Միրզան» միջնադարյան բալլագ-ողբերգի ննուշ է, որ պատմում է ժողովրդի հիշողության մեջ կենդանի ազնվարարո և գեղեցկալեմ Մոլկի իշխաններից մեկի նենց սպանության մասին: Պատճառն ըստ առաջին տարրերակի նրա ունեցվածքին, ըստ երկրորդի՝ նրա գեղեցկուիի կնոջը տիրանալու ձգուումն էր: «Մոլաց Միրզան» այն հազվագյուտ վիպերգերից է, որ երգվում է սկզբից մինչև վերջ, հորինված է ազատ ուտանավորի ոճով, ուրվանկանի տողերով, որը բնորոշ է մեր հին և նոր առասպելներին: Երգի լրիվ տարրերակը ձայնապնակի վրա Կոմիտասի երգածից նոտագրել է Մուշեղ Աղայանը, մյուսը՝ թերի, միայն մեկ տճով, տեղ է գտել Սա. Մելիքյանի «Ուրվագծում...»: Երրորդ տարրերակը, կապված Միրզայի հավատարիմ կնոջ կերպարի հետ, Ա. Քոչարյանին է հաղորդել Արքահամ Զոհրաբյանը՝ առանց մեղեդու:

Բազմաթիվ ժողովրդական և հեղինակային վիպերգերից, որ հայ ժողովուրդը ձննել է իր սիրած հերոսին՝ Ա. Քոչարյանը «Վարդանանց շարքում» ընտրում և ներդաշնակորեն իրար է միացնում իինավորց ժողովրդական մի երգ և երեք հեղինակային ստեղծագործություն: «Դրանք են՝ Ներսես Շնորհալու «Շարական սրբոց Վարդանանց», Մակար Եկմալյանի «Լոեց» (ըստ Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» եղելերգի) մեներգչի և երգչախմբի համար գրված երգը և աշուղ Զիվանու հանրահայտ «Ավարայրի դաշտը»:

Շարքն սկսվում է «Մոր ողբը» հիասքանչ ժողովրդական երգով, որին հետևում են վերոհիշյալ հեղինակային երգերը: Թեև ստեղծման

¹⁷ Նոյն գրքում Ա. Փակլամբյան, «Սասան ծուեր» ժողովրդական վեպի երգային հատվածների կոմիտասյան գրառումները, էջ 99:

Ժամանակաշրջանով սրանք գրեթե 700 տարով հեռու են միմյանցից, բայց իրենց վեհաճան և էպիկական բնույթի շնորհիվ, նոյն՝ միասնական վիպերգական միջավայրում են դիտվում:

Հաջորդ՝ «Կրոնական երգերի» շարքին են դասվում «Ալեքսանոսից» երկու հատված և «Կարսո խաչի» երեք տարրերակ: Մի կողմից՝ հանրահայտ կրոնական ասք սրբազն մարտիրոսության մասին, մյուս կողմից՝ քրիստոնեական խաչի գորության հանդեպ հասարակ ժողովրդի պարզ, անպաճույծ հավատը: «Ալեքսանոսի» կամ «Հեքսիանի» սրտառուց երկու պատում հրատարակել է Սարգիս Հայկոնին՝ «Եմինյան ազգագրական ժողովածովի» Զ հատորում: Այդ վիպերգից Ա. Քոչարյանի ժողովածուտմ ներկայացված է երկու երգային հատված, թեև Ա. Հայկոնին վկայում է, որ վեար երգվել է ամբողջությամբ¹⁸: «Կարսո խաչի» երեք տարրերակն էլ լինվ է երգվում և այդպես էլ ներկայացվում են Կոմիտասի և Ա. Քոչարյանի ձայնագրություններում: Ըստ Ա. Քոչարյանի, Կոմիտասի տարրերակն ավելի հին է: Երրորդը՝ Սաք. Մելիքյանի ձայնագրածը, լիարժեք չէ, քանի որ ընդամենը մեկ տուն է: Այս առունով, տեղին է հիշել Ա. Քոչարյանի վերոհիշյալ կարծիքը, որ ձայնագրման պայմանները երթևն հապճապ և անհարմար են եղել: «Ալեքսանոս» և «Կարսո խաչը», ինչպես և հաջորդ՝ վիպա-քննարական շարքում տեղ գտած երգերն արդեն ուշ միջնադարի ծնունդ են: Մի կողմից՝ այս երգերում պահպանված է պատողական բնույթը, մյուս կողմից՝ լի են հուզականությամբ, որը նկատելի է դեռևս Վարդանանց շարքից:

Հինգերորդ՝ «Վիպա-քննարական» շարքում ներգրավված է «Անտոնով» երեք տարրերակ, «Առնոսի» երկու տարրերակ և մի քանի երգ, որոնց Ա. Քոչարյանը բնուրագրում է որպես դժբախսության կամ պատահարի երգեր: «Անտոնով» երեք տարրերակն էլ Կոմիտասին են¹⁹:

¹⁸ «Ալեքսանոսի» երրորդ երգվող նմուշը կոմիտասյան հրատարակությունների հետ համեմատելիս հայտնաբերել է երաժշտագետ Կ. Խուդարաշյանը և վերլուծել իր հոդվածում. «Հոգեոր տաղի ժամը հայ վիպերգության մեջ (ըստ Ալեքսանոսի մասին գրույցի)», // «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 79-88: Երգի բնագիրը՝ «Տասն ավոր ճանապարհ» տես՝ Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, Երևան, 1931, հ.1, N 92:

¹⁹ Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ.1, Ծար Ակնա ժողովրդական երգերի, NN 8Ա, 8Բ, և Կոմիտաս, Երկերի ժողովածու, Երևան, 1931, հ.1, N4:

Եվս մի հետաքրքիր դիտողություն. անտումիները և հայրենները մեզ են հասել մ. թ. 12-13 դդ. և հիմնականում պահպանվել Ակմում, Արարքիրում, Խարբերդում: Կոմիտասն իր ձայնագրությունները կատարել է հենց Ակն քաղաքում: Մ. Արեղյանը գտնում է, որ միջին հայերենը պահպանվել և մեզ է հասել հատկապես այս երգերի շնորհիվ: Սա այն հազվագյուտ դեպքերից է, երբ վիպական երգն ընդլայնելով ֆունկցիոնալ շրջանակները, տեղեկություններ է հաղորդում ոչ միայն իր ժամանակաշրջանի կենցաղի և հարաբերությունների մասին, այլև հարակից գիտության, այս տարբերակում՝ լեզվաբանության վերաբերյալ:

Այնուհետև, Ա. Քոչարյանը ներկայացնում է «Առնոս» երգի երկու տարբերակ. մեկը Ավել Զարյանի, մյուսը՝ Հայրիկ Մուրադյանի երգածից: Հայրենի բնությունը միշտ էլ ներշնչանքի աղբյուր է եղել ժողովրդական արվեստի համար: Առնոս լեռանը, որ Շատախի հրաշալիքներից է, ժամանակին շատ երգեր են ճռնվել, որոնցից մեզ միայն մեկն է հասել: Երգի հերոսը մի խեղճ հովիլ է, որի վիրած աղջկան հափշտակում են, իսկ իրեն՝ դաժանորեն ծեծում: Պատահին սրտառու պատմում է իր տառապանքների մասին, ոյմելով հարազատ լեռանը, որի մոայլված տեսքը, բուք ու բորանի հետ միասին, կարծես համահունց են իր հոգեվիճակին: Ա. Քոչարյանը հարգանքով և համակրանքով է խոսում իր այս երկու քանաացների մասին: Երկուսն էլ Շատախից են, քաջատեղյակ հայրենի քանահյուսությանը և երաժշտական ձիքով օժտված: Ավոն կիսազրագետ էր, զյուղից նոր եկած, և վիպերգը նրա կատարմանը պարզ ու ասերգային է՝ կսզմած երկու միօրինակ և կրկնվող դարձվածից: Հայրիկ Մուրադյանը քարձրագույն կրթություն էր ստացել, աչքի էր ընկնում լայն մտահորիզոնով, սերտորեն կապված էր իր ժողովրդի ճակատագրի հետ: «Առնոսի» տարբերակը նրա կատարմանը ավելի մեղեղային է, եկեղեներով հարուստ, լի խորը զգացմունքներով և փիլիսոփայությամբ: «Առնոսի» այս տարբերակը Ա. Քոչարյանը դասում է հայ վիպերգության ամենակատարյալ նմուշների շարքին²⁰: «Առնոսին» հետևում են «Որք աղջիկը և մորաքույրը» վիպերգի երեք տարբերակը, երկուսը հաղորդել է Մ. Լյուենյանը Նոր Նախիջևանից, երրորդն Ապարանում է գրանցվել՝ որպես ալարերգ: Երգի հուզումնալից բովանդակությունը քափառող սյուժեների շարքից է,

²⁰ Ա. Քոչարյան, Էջեր հայ ժողովրդական վիպասանությունից, էջ 150:

տարածված նաև այլ ժողովորդների շրջանում. օրինակ՝ Լ. Դանկածեի «Սուրամի բերդը» պոեմում:

«Վիպա-քնարական» շարքը եզրափակում է երեք, այսպես կոչված, դժբախտության երգ՝ «Խարիբ Մելքոնը»²¹, «Ունան»²² և «Շորորա Սալաթը»²³, որոնք պատմում են հիվանդության կամ որևէ պատահարի պատճառով կյանքից անժամանակ հեռացած երիտասարդների մասին: Այս սրտաճմիկ երգերը ժամանակին շատ սիրված ու տարածված են եղել:

Գրի Վերջին՝ վեցերորդ շարքը նվիրված է երգիծական երգերին, որոնցից մեկը՝ Քր. Կարա-Մուրզայի մշակած հանրահայտ «Գացեք տեսերն...» է: Այն Բարեկենդանի ծիսական երգերի շարքից է: Կառուցվածքով պատկանում է շարունակական երգերի տիպին, որը նախորդ տան վերափոխված սկզբնական տողը դառնում է հաջորդ տան սկիզբը և այսպէս շարունակ, որն ինքնին երգին կատակային բնույթ է հաղորդում: Մյուսը՝ «Խորամանկ աղվես» վիպերգն է, որը ձայնագրել, նուտագրել և առաջին անգամ հրատարակման փորձ է արել Ա. Քոչարյանը: Սա պատմողական վիպերգերի շարքից է, որտեղ երաժշտությունը մասնակի տեղ է գրավում: Ժամանակին նման վիպերգերը լայն տարածում էին գտնում բացօթյա ժողովրդական հանդիսությունների ժամանակ, քանի որ հումորով հագեցած սյուժե ունեին և խաղարկվում էին կենդանիների դիմակներով՝ զվարճանք և ուրախություն պատճառելով հանդիսատեսին: Առաջմ սա միակ երգիծական պատմվածքն է, որ երգային հատկածներ ունի:

Ամփոփելով Ա. Քոչարյանի «Էջեր հայ վիպական երգաստեղությունից» գրքի հակիրճ նկարագրությունը, կարող ենք սաեւ, որ մեր առջև հառնում է հայ վիպերգության մեծ գիտակի կերպարը, որը խորին ակնածանքով և հոգատարությամբ ուսումնասիրել, դասակարգել և սիրով նկարագրել է վիպական երգերը, ներկայացրել վիպասացներին և երգի ծագման միջավայրը: Ա. Քոչարյանի սեփական գրառումներն աշքի են ընկնում ճշգրտությամբ և նրբանկատությամբ: Նրա ժառանգությունը հարուստ ու բովանդակալից է, և մասնագետների ուշադրության ու հրատարակման կարիքն ունի, որից կշահի գիտությունը և երաժշտասեր հասարակությունը:

²¹ Լյովենյան, Մ. Գ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական երգերն ու նդանակները, ՀԱ և Բ, հ.2, Երևան, 1971, N38:

²² Նույն տեղում, N35:

²³ Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, Երևան, 1931, հ.1, N5:

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ
ԵՐԱԺԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ աշուղական երգարվեստը՝ ազգային մշակույթի երաժշտաբանաստեղծական ավանդական և հարստագրվյան երևույթներից մեկը, անվանի երաժշտագետ Ա. Քոչարյանի գիտահետազոտական բազմաբեղուն գործունեության հիմնական ոլորտներից է։ Վերջինիս ուղղությամբ երաժշտագետը նվիրվածությամբ, հետևողականորեն, արգասավորաբար գործել, պրատել է իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում։ Այս իմաստով, ի թիվս Քոչարյանի այլ երկերի, հատկանշական երաժշամի «Իրա վաղ շրջանի "Արմանսկայ հարօճանա մուզակա"» (Մ.-Լ., 1939) հայտնի արժեքավոր գրքույկը, «որը ոռու ընթերցողների շրջանակում երկար ժամանակ համարվել է հեղինակավոր գրեքն միակ աղբյուրը» (Ս. Թահմիզյան)¹ աշուղներին նվիրված ոչ ծավալուն, սակայն բազմաբովանդակ ծրագրային բաժիններով։ Հատկանշական են նաև երաժշտագետի վերջին երկերը, հայ աշուղական երաժշտության ոլորտում նրա բազմամյա հավաքչական և հետազոտական աշխատանքների հանրագումարը ներկայացնող «Հայ գուանական երգեր» (Երևան, 1976) և «Աշուղական սիրավեպեր» (Երևան, 1976, ձեռագիր) ժողովածուները։

Ա. Քոչարյանի աշուղագիտական գործունեությունն ընդգրկել է բանավոր ավանդույթի երաժշտության ուսումնասիրության բոլոր ոլորտները։ Կյանք են, ինչպես հայտնի է, բանավոր երաժշտական նյութի հավաքումը, նոտագրումը, հետազոտությունը, հրատարակությունը։ Հատկապես այդ ոլորտների տեսանկյունով ենք փորձել դիտարկել Քոչարյանի հետազոտական աշխատանքները հայ աշուղական երաժշտության ասպարեզում։

Աշուղական երգերի հավաքում և նոտագրում։ Ժողովրդական երաժշտության հարյուրափոր երգային և նվազարանային նմուշների հետ մեկտեղ, Ա. Քոչարյանը հավաքել է նաև մեծ թվով բազմապիսի

¹ Ա. Քոչարյան, Հայ գուանական երգեր, Երկու խոսք, Երևան, 1976, էջ 6:

աշուղական երգեր և աշուղական սիրավեպերի երգային հատվածներ: Ընդ որում, կիրառել է նյութի հավաքման թե՛ մերենայական (մագնիսոնֆոնով), թե՛ լսողական (առսիլիով) եղանակները²: Երաժշտագետի հավաքած աշուղական երգերի առավել մեծ հատվածն այժմ գտնվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճայնադարանի Ա. Քոչարյանի ֆոնդում³: Այստեղ կենտրոնացած է ընդհանուր առմամբ աշուղական երաժշտության 305 նմուշ (հնչող նյութ՝ մագնիսոնֆոնային ճայնագրություններ): Դրանցից 258-ը՝ աշուղական երգեր են, 47-ը՝ երգային հատվածներ աշուղական ասքերից⁴: Միաժամանակ աշուղական երաժշտության քոչարյանական հարյուրից ավելի ձեռագիր նոտագրություն պահպանված է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի երաժշտական բաժնի Քոչարյանի արխիվային ֆոնդում (հետայսու՝ ԳԱԹ, Ք.Ֆ.)⁵:

Զայնագրվել և դրանով իսկ պահպանվել, մոռացությունից և կորստից են փրկվել 17-20-րդ դարերի հայ աշուղական տարրեր դպրոցների (Գանձակ, Ալեքսանդրոպոլ, Խնձորեսկ, Լենինական և այլն) բազմաթիվ ներկայացուցիչների՝ Նադաշ Հովհանքան, Սիսկին Բուրջի, Չահրի, Սիայի, Ջիվանի, Շերամ, Մահուրի Գևորգ, Շահեն և մյուսների բազմաբնույթ երգերը՝ սիրային, հայրենասիրական, խրատական, ծաղրական և այլ թեմաներով: Երգասացներն են սոցիալական տարրեր կարգավիճակի և մասնագիտության տեր մարդիկ (մեծ մասմբ՝ տղամարդիկ), բոլոր սակայն աշուղական երաժշտության գիտակներ և շնորհալի կատարողներ: Այսպես, Սիսկին Բուրջիի «Էշխիցըդ ջունուն

² Այս մասին տես. Ա. Քոչարյան, Գրիգոր Տալյան՝ աշուղ Շերամ, «Սովետական արվեստ» ամսագիր, Երևան, 1967, N4, էջ 49, ինչպես նաև «Հայ գուանական երգեր», էջ 6:

³ Հետայսու՝ Ք.Ֆ.:

⁴ Տվյալները տրամադրել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժող. արվեստի բաժնի գիտաշխատող Մարգարիտ Սարգսյանը: Ավելի մանրամասն Ք.Ֆ.-ի վերաբերյալ տես՝ Ս. Սարգսյանի «Արամ Քոչարյանի ժողովրդական երաժշտության հավաքածուն՝ ըստ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճայնադարանի ֆոնդի» հոդվածը, որը գետեղված է սույն ժողովածուում:

⁵ Տես. Գ.ԱԹ, Ք.Ֆ., երաժշտական ժողովածուներ, NN 4, 5, 6: Այստեղ է գտնվում նաև երաժշտագետի կազմած աշուղական երգերի տերատերի ժողովածուն (1939 թ., Գ.ԱԹ, Ք.Ֆ., N 9): Գ.ԱԹ, Ք.Ֆ.-ից բերված տվյալները լիկ չեն՝ արխիվին ամբողջապես մշակված և դասակարգված չինելու պատճառով:

լառած», «Քոյլդ բարձր», «Գալուստ Արքա», Պայծառեկի «Ու՞ր ես արդյոք», Արայի «Ընծա հավը» երգերը⁶ Քոչարյանը ձայնագրել է երգիչ, աշուղական երաժշտության անխոնց տարածող Վաղարշակ Սահակյանից⁷: Ջիվանու «Արի, իմ նազեի բամբիշ», «Սկիկ աչեր» երգերը⁸ ձայնագրվել են մեծ աշուղի որդի, նշանավոր աշուղագետ Գարեգին Լևոնյանից⁹, ջիվանիական մի շարք այլ երգեր՝ «Ապրիս հասակագեղ», «Ախապար արի ասօր», «Օր ըստ օրեւ», «Քյասիսութեն»¹⁰ գուսան Հավասուց¹¹: Գուսան Շահենից երաժշտագետը ձայնագրել է քիչ հայտնի աշուղներ, գուսանի մորենորայր՝ Ալեքի¹² «Երամ-երամ»¹³, Վաճոյի «Դիլիվցի Վաճոյի երգը», Մարտիրոսի ««Լալիջու յայլի մեջ» երգերը¹⁴: Քոչարյանի երգասացներից էին նաև հողագործներ Եգոր Ավետիսյանը (Ապարան), Կարո Համբարձումյանը (Ախուա. ներկայումս Հրազդանի շրջան), Արշակ Սարգսյանը (ծնունդով՝ ալաշկերտցի), «զյուղական պրոֆեսիոնալ աշուղ-կատարող» Գրիգոր Շամշադինեցին և այլք¹⁵:

Առանձնակի հետաքրքրության են արժանի աշուղական երաժշտության հատկապես այն նմուշները, որոնք Քոչարյանը ձայնագրել է քուն «ակզրնադրյուրից»՝ հեղինակներից: Այդ հեղինակներից է աշուղ Շերամը, որը 1930-ական թթ. կեսերին դարձավ Երևանի պետական կոնսերվատորիայի նորաբաց երաժշտական զիտահետագոտական կարիքնետի ամենօրյա այցելուն: Այստեղ Շերամի ձայնից մեր երաժշտագետը լսողությամբ նոտագրել է իր իսկ բնութագրմամբ «ընդամենը» 135 երգ, որոնց բնագրին հարազատ քոչարյանական ճշգրիտ գրառումները գրիացրել են տարեց աշուղին.

⁶ «Հայ գուսանական երգեր», NN 107, 108 (N 108-ը՝ N 107-ի մեղեդիական տարրերակի է), 109, 110, 121, 23:

⁷ Նոյն տեղում, էջ 341, 346, 347:

⁸ Նոյն տեղում, NN 116, 117:

⁹ Նոյն տեղում, էջ 347:

¹⁰ Նոյն տեղում, NN 15, 18, 54, 55:

¹¹ Նոյն տեղում, էջ 340, 341, 344:

¹² Տեղիկուրյունից հայտնել է գուսան Շահենի դուատը՝ աշուղագետ Ելինար Շահենը:

¹³ «Հայ գուսանական երգեր», N 56: Նաև նոյն տեղում, էջ 344:

¹⁴ «Դիլիվցի Վաճոյի երգը» և ««Լալիջու յայլի մեջ» երգերի հեղինակների մասին տեղեկությունը՝ Է. Շահենից: Երգերի ձայնագրությունները գտնվում են Ք.Ֆ.-ում:

¹⁵ Տե՛ս, Ա. Քոչարյան, Հայ գուսանական երգեր, էջ 368:

«Եհ, իիմի մեռնելեն չեմ վախենա, զիդեմ օր երգերս չեմ կորի», ասել է նա¹⁶: Նշենք, որ այժմ հրատարակված է Շերամի երգերի քոչարյանական ընդամենը 31 նոտագրություն: Դրանցից 18 նմուշ գետեղված է Շերամի «Երգեր» (Երևան, 1981) ժողովածուում, 13-ը՝ «Հայ գուսանական երգեր» հատորում: Թվում է, թե աշուսի վերը հիշատակված 135 երգի «ամբողջությունը» հարկավոր է փնտրել ԳԱԾ, Ք.Ֆ.-ում: Այստեղ երաժշտագետի արխիվային բազմաթիվ նյութերից մշակված և այժմ ուսումնասիրողներին մատչելի երգային ձեռագիր երկու ձայնագրյալ ժողովածուներում (ԳԱԾ, Ք.Ֆ., NN 5, 6), ընդգրկված են Շերամի մոտ 100 երգի Ա. Քոչարյանի նոտագրությունները: Գուսան Չահենցից երաժշտագետը ձայնագրել է նրա «Նանար-նանար», «Ասի յարանս, յարանս», «Քիլրիլիքի յարս» և այլ երգեր, «Էլինար» սիրավեպի երգային հատվածները¹⁷: Զայնագրվել են նաև գուսան Հավասու երգերը հետինակից¹⁸: Ա. Քոչարյան բանահավաքի սեռուն ուշադրության կենտրոնում են եղել արեւյան ժողովրդների երաժշտարանաստեղծական ստեղծագործության գոհարները՝ աշուղական ասքերը: Երաժշտագետի մշտամնա, նպատակաուղիված հաւաքչական աշխատանքներն ու պրատուններն այս ասպարեզում ամփոփվել, «միս ու արյուն» են ստացել նրա «Աշուղական սիրավեպեր» ձեռագիր ժողովածուի տեսքով¹⁹: Զեռագրուն բացակայում է ժողովածուի գիտական ապարատը, որի վերաբերյալ Քոչարյանը ձեռագրի առաջին էջում նշել է: «Աշխատության ներածականը և ծանրագրությունները, որոնք կազմում են մոտ 100 էջ, սրբագրում և մաքրագրում են: Այժմ ներկայացնում են միայն ժողովածուն»²⁰:

Ժողովածուն բացառիկ նշանակություն ունի. աշուղական ասքն այստեղ առաջին անգամ մեզանում ներկայացված է իր երկու

¹⁶Ա. Քոչարյան, Գրիգոր Տայլան՝ աշուղ Շերամ, էջ 49:

¹⁷ Զայնագրությունները՝ Ք.Ֆ.-ում:

¹⁸Տես. Գուսան Հավասու, Խմ թնարք, Երևան, 1961, էջ 4:

¹⁹Պատճենը զտնվում է ՀՀ ԳԱՍԱ Արվեստի ինստիտուտի ժող. արվեստի բաժնում:

²⁰ Աշուղական ասքերի ուսումնասիրությանն են նվիրված երաժշտագետ Լ. Երնջակյանի հետագուտությունները, տես՝ նրա «Աշուղական սիրավեպը հայ-արեւյան երաժշտական փոխառնչությունների համատերսուում», արվեստագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիրը, Երևան, 2004:

բաղադրիչների՝ «երգ ու բանի» (մելետային և խոսքային՝ արձակ և բանաստեղծական տեքստերի) միաձույլ ամբողջությամբ²¹: Քոչարյանն անդադարձել է թե՛ հայկական, թե՛ ընդհանուր արևելյան ասքերին: Դրանով է պայմանավորված ժողովածովի կառուցվածքը: Այն կազմող տասը նմուշը դասակարգված է «Հայկական շարքի» (ժողովածովի առաջին մասը՝ վեց նմուշ) և «Ընդհանուր արևելյան շարքի» (երկրորդ մասը՝ չորս նմուշ): «Հայկական շարք» են մտել Գյուղյացյանի «Ամրատ և Սոֆիա»²², Սագայու «Արտաշես և Սարենիկ»²³, «Նելիք Արով և Ղամար Սովթան»²⁴ սիրավեպերը: Նոյն բաժնում ընդգրկված է նաև

²¹ Մինչ այդ գրի են առնվել աշուղական ասքերի միայն երգային հատվածները, տե՛ս. Սայ. Մելիքյան, «Շիրակի երգեր», ճայնագրյալ ժողովածուն, Թիֆլիս, 1917, NN 126, 130-136, Զիվանի, Երևան, 1955, 14 հատված «Աշուղ Ղարիբցի» և 3 հատված «Քյարամ և Ասլից»: Հրատարակվել են նաև սիրավեպերի միայն խորային տեքստերը, տե՛ս. «Աշող Ղարիբի հերեաքը», փոխադրույթուն տաճկերենից, աշխատասիրեց աշուղ Զիվանին, Ալեքսանդրապոլ, 1895, «Զօնողու հերիաքը», փոխադրող տաճկերենից հայերեն՝ աշուղ Զամալի, Թիֆլիս, 1897, «Աշող Ղարիբ», «Քյոր-օլիլի», «Ամրահ և Սալի», «Աղվան և Օսան» (հերիաքեր, հ. 1-ին), կազմող Ռ. Սողոմոնյան, առաջարանը և ծանրագրությունները՝ Շ. Գրիգորյանի, Երևան, 1992:

²² «Հաղորդել է Արշակ Սարգսյանը, գրի է առել Ա. Քոչարյանը»,- Աշուղական սիրավեպեր, էջ 33: Զեռագրում բերված են սիրավեպի համառոտ բովանդակույթունը և երգային չորս հատված: Նշումները սիրավեպի կատարողների, նաև ձայնագրողների վերաբերյալ այստեղ և հետայսու արել ենք ըստ քոչարյանական ձեռագրի:

²³ Զեռագրում բերված է «Արտաշես և Սարենիկ» սիրավեպի խորային մասը, և երեք երգ, որոնցից առաջինը «Երգեց Հ. Պեպոյանը, գրի առավ՝ Ս. Մեսրոպյանը», «Աշուղական սիրավեպեր», էջ 136, իսկ երգերը գրառել է Քոչարյանը, NN 2, 3, էջ 139, 142:

²⁴ Սիրավեպը պատմեց և երգեց (20 երգ) Արգուման Թոռչյանը (Նոր Բայազետ), իսկ «վեպն ու երգերը ամբողջությամբ գրի առավ Ա. Քոչարյանը», նոյն տեղում, էջ 46:

Երեք երգային հատված Սիայու «Վարդ մանուշակ»²⁵, Սազայու «Ամրահ և Սալվի»²⁶ և երկու երգ Շահենի «Հլինար» սիրավեպերից²⁷:

Ժողովածովի երկրորդ բաժինը կազմված է Արևելքի գրեթե բոլոր ժողովարդների կողմից որդեգրած «Ասի և Քյարամ»²⁸, «Քյոռողի»²⁹, «Աշուղ Ղարիբ»³⁰, «Արար Յուզանկի»³¹ երգախառն հերիար-ավանդավեպերից: Արևելյան շարքում ասքերի երգային հատվածների զգայի մասը ներկայացված է գրդիրային նախանվագներով (գրդիրը նշված չէ): Սիաֆանանակ «Քյոռ օղի» ասքի «Սարի գագարից նայեցի» հայտնի երգը (Քոչարյանն այն ձայնագրել է աշող Գրիգորից) բերված է հայ մոնողիկ երաժշտության ավանդական վոկալ-գործիքային (ձայն և տվյալ դեպքում՝ սազ) երկայնության ձևով (Էջ 186):

Հարկ է նշել, որ Ա. Քոչարյանը ասքերի երգային հատվածների իր սևական գրառումների հետ մեկտեղ, գրծի է դրել նաև անվանի երաժշտագետներ ֆուլլորագետներ Արշակ Բրուտյանի և Սահիրիդոն Մելիքյանի գրառումները նույնպես³²: Ասքերում բերված է 78 երգային նմուշ՝ մենախոսություններ, երկխոսություններ, որոնց նկազային, կշռութային և այլ մանրամասնություններով, նաև «բարդություններով»

²⁵ Է. Շահենի վկայությամբ՝ Սիայու «Վարդ մանուշակ» սիրավեպը Քոչարյանի խնդրանքով գրի է առել (խոսքային մասը) և սովորել (երգային մասը) գոտան Շահենը 1939 թվականի ամռանը Քողովանվկայի շրջանի Դիլիջ գյոտի քնակիչ, իր զարմիկ՝ աշող Արտաշից (Արտաշ Ստեփանի Սարտիսանյան): Հետազայում գրի առնված տերսությ (խոսքային մասը) հանձնվել է Ա. Քոչարյանին, որը և լրացրել է այն երգային հատվածներով՝ գոտան Շահենի ձայնից: Սակայն խնդրո առարկա ձեռագրում առկա են միայն սիրավեպի երգային հատվածները:

²⁶ Կատարել է Կ. Համբարձումյանը, գրի առել՝ Ա. Քոչարյանը՝ Աշուղական սիրավեպեր, Էջ 22:

²⁷ «Կատարեց հեղինակը, գրի առավ Ա. Քոչարյանը», նույն տեղում, Էջ 4:

²⁸ Խոսքային մասը և յոթ երգային հատվածներ, ձայնագրությունը՝ Ա. Բրուտյանի, խմբագրում՝ Ա. Քոչարյանի, նույն տեղում, Էջ 163:

²⁹ «Քյոռողի» ասքի նյութն ամբողջապես վերցված է Ղ. Ալյայանի «Արկածներ Քյոռ օղիո կեանքից», նույն տեղում, Էջ 176: Երգերը կատարել են Կ. Համբարձումյանը և աշող Գրիգորը, ձայնագրությունը՝ Ա. Քոչարյանի, նույն տեղում, Էջեր 182, 186:

³⁰ Բերված են սիրավեպի խոսքային մասը և 17 երգ: Կատարող՝ Կ. Համբարձումյանը և աշող Գրիգորը, ձայնագրությունը՝ Ա. Քոչարյանի, նույն տեղում, Էջեր 182, 186: Ձայնագրությունները՝ Ա. Քոչարյանի, նաև Ա. Բրուտյանի և Ապ. Մելիքյանի:

³¹ «Վեպն ո երգերը» (15 երգ Ա.Բ.) գրի առավ Ա. Քոչարյանը», նույն տեղում, Էջ 190:

³² Տի՛ս, Աշուղական սիրավեպեր, Էջ 163, 165, 172, 264, 283 և այլն:

բազմահարուստ մեղեղիների գերակշռող մասը վարպետորեն նուտագրված է մեր քաջահմուս երաժշտագիտի ձեռքով: Այդ մեղեղիներն իրենց բնույթով, ծայնակարգային, ձևակառուցողական, նաև տաղաչափական և մյուս հատկանիշներով, մեծ հետաքրքրություն են ներկայացնում երաժշտական աշուղագիտության կարևորագույն, սակայն դեռևս քիչ հետազոտված բնագավառներից մեկի՝ աշուղական դասական, կանոնական եղանակների ուսումնասիրության համար: Սոորու աղյուսակի միջոցով փորձել ենք որվագծել քոչարյանական ժողովածուն, վերջինիս ասքերի և երգվող հատվածների տեսանկյունով:

Ասքի անվանումը	Երգվող հատվածների քանակը
1. Էլինար	2
2. Վարդ մանուշակ	3
3. Ամրահ և Սավի	3
4. Սմբատ և Սովիա	4
5. Մելիք Արով և Ղամար Սովթան	20
6. Արտաշես և Սարենիկ	3
7. Ասյի և Քյարամ	7
8. Քյոտողի	4
9. Արաք Յուզանկի	15
10. Աշուղ Նարիք	17
Ընդհանուր գումարը՝	78

Աշուղական երգերի հետազոտություն: Հայ աշուղական երաժշտության հետազոտությունը Ա. Քոչարյանի երաժշտագիտական գործունեության անբաժանելի մասն է: Իր հայացքներն այս ասպարեզում Քոչարյանն արտահայտել և հիմնավորել է "Армянская народная музыка" գրքում (էջ 23-32) և «Հայ գուսանական երգեր» ժողովածուի ներածությունում (էջ 9-43)³³:

³³ Ինչպես հայտնի է, հայ աշուղական երաժշտության պատմության և երաժշտատեսական հարցերով հիմնավորապես գրաղվել են նաև Քր. Քոչնարյանը՝ Вопросы истории и теории армянской монодимической музыки, Л., 1958, Ա. Մանուկյանը, Սովետահայ գուսանների երաժշտական ստեղծագործությունը, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան,

Ա. Քոչարյանն անդրադառնում է հայ աշուղական երգարվեստի ծագմանը, ընդհանուր՝ արևելյան, նաև ազգային ակունքներին, պատմական ընթացքին, աշուղական դպրոցներին, ոճերին և այլն³⁴, իհմք ընդունելով այս ոլորտում «մեր աշուղական արվեստին վերաբերող բանափրական գիտելիքները», «որոշ լուսաբանումը»³⁵, և հատկապես Գ. Լևնյանի հայացքները և դրույթները: Միաժամանակ Ա. Քոչարյանը զգալիորեն զարգացրել և հարստացրել է եղած պատկերացումները հայ աշուղական երաժշտության վերաբերյալ, առաջին անգամ հետազոտելով և «դուրս բերելով» «աշուղական բանաստեղծական-երաժշտական մի շարք գլխավոր ձևերի բնութագրությունը»³⁶: Աշուղական երաժշտության, մասնավորապես, տաղաչափական ձևերը, որոնք մինչ այդ հետազոտվել են բացառապես չափածո խոսքի, բանաստեղծական արվեստի տևանկյունով³⁷, ներկայացվում են երաժշտական և երաժշտաբանաստեղծական նկարագրերով: Այս թեմային է նվիրված Քոչարյանի «Հայ գուսանական երգեր» ժողովածուի «Ներածության» բաժնի զգալի մասը (էջ 23-43): Այսպես, Դյուքենիքը, որը «աշուղական պարզ ու շատ ընդհանրացրած ձևերից մեկն է», Թափիքը, որն իր պարզ ու բարդ կառուցվածքներով առանձնապես հետաքրքրական է Սայաթ-Նովայի և Պաղտասար Դափիքի գործերում, «Ղազելը, որի ձևով հորինված են Զիվանու «Ավետարեր խոսնակը հայուն», «Ախ, թորկեր եմ», Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» երգերը³⁸, նաև Դիվանին, Սեմային, Վաշնան, Դաստանը և աշուղական մյուս գլխավոր բանաստեղծական, երաժշտական ձևերը, դիտարկվում են երաժշտագետի կողմից այդ ձևերի ձայնակարգային,

1969, Ն. Թահմիզյանը՝ Սայաթ-Նովան և Հայ գուսանական-աշուղական երգ-երաժշտությունը, Փասադենա, 1995 և Լ. Երնջակյանը, տես ծանոթագրություն 21:

³⁴Տես. Ա. Կոչարյան, Արմանական ազգային մասնակիցների հայությունը, Հայաստանի պատմության մասին, 1995 և Ա. Կոչարյան, Հայաստանի պատմության մասին, 1995 և Ա. Կոչարյան, Հայ գուսանական երգեր, էջեր 9-21:

³⁵Գ. Լևնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 4:

³⁶Հայ գուսանական երգեր, էջ 23: Տես նաև նոյն տեղում՝ Ն. Թահմիզյան, Երկու խոսք, էջ 7:

³⁷Գ. Լևնյան, Հայ աշուղներ, Ազգագրական հանդիսա, XI գիրք, Թիֆլիս, 1904, էջ 164, նաև նոյն հեղինակի «Աշուղները և նրանց արվեստը», էջեր 52-79, Ս. Աբեղյան, Երկեր, հ. Ե, Երևան, 1971:

³⁸Հայ գուսանական երգեր, էջ 24, 27, 31:

ձայնածավալային, կշռութային, մեղեղային, նաև այլ բնույթի տարրեր քննորչ դրսերումներով:

Միաժամանակ, առաջին անգամ աշուղական երաժշտության նկատմամբ գործի է դրվում վերլուծության վանկաչափական սկզբունքը³⁹, որի միջոցով լավագույնն ի հայտ է գալիս երգի առավել կայուն անփոփոխ բաղկացուցիչը՝ տաղաչափական հենքը:

Ա. Քոչարյանի գրչին են պատկանում նաև աշուղ Շերամի կյանքին և գործունեությանը նվիրված մեզ հայտնի երկու հոդվածները՝ «Աշուղ Շերամ» (Գրիգոր Տալյան, մահվան 10-ամյակի առթիվ)⁴⁰ և «Գրիգոր Տալյան՝ աշուղ Շերամ» (ծննդյան 110-ամյակի առթիվ)⁴¹, որտեղ քննարկվում են աշուղի երկերի երաժշտաբանաստեղծական լեզվի մի շարք առանձնահատկություններ:

Աշուղական երգերի հրատարակում: Քոչարյանի աշուղագիտական գործունեության ասպարեզներից է նաև աշուղական երաժշտության հրատարակումը: Երաժշտագետի աշխատասիրությամբ լույս է տեսել «Հայ գուսանական երգեր» վերոհիշյալ ժողովածուն՝ մեզանում երաժշտական աշուղագիտության դասական նմուշներից մեկը: Վերջինիս «նյութերի մեջ առավել ամբողջական ու ոճականորեն միաձույլ մասը աշուղական ստեղծագործությունների միակցությունն է, որն առաջին անգամ է մատուցվում երաժշտական և երաժշտագետ հասարակայնությանը՝ մի հատորի մեջ ընդգրկված» (Ն. Թահմիզյան)⁴²:

Ժողովածում գետեղված է 164 երգ, որից 46-ը՝ «Քոչարյանի ձայնագրությամբ»⁴³ (մասամբ՝ 17 երգ գործիքային նախանվագով): Դրանք շուրջ 18 հետինակի երգեր են, որոնց մեկ մասը անցյալում

³⁹ Առաջին անգամ հայ երաժշտագիտության մեջ վանկաչափական վերլուծության սկզբունքը կիրառվել է Կոմիտասի կողմից, տես, Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտություն, Փարիզ, 1938, «Ամանակ, վանկաչափություն»: Հետազոտական նույն սկզբունքին աշուղական երաժշտության մեջ հետևեցին նաև Կ. Խուսարաշյանը, Կ. Զարացպանյանը, Դ. Դամիելյանը:

⁴⁰ Հողվածը ծեռագիր է՝ Գ.Աթ. Ք.Ֆ., N 1:

⁴¹ Տես N 2 ծանրագրությունը:

⁴² Հայ գուսանական երգեր, էջ 6: Հարկ է նշել, որ մինչ այդ մեզանում արդեն գոյուրյուն ունեցել է «աշուղական ստեղծագործությունների միակցություն»՝ Ա. Բրուտյանի մեծարժեք, դասական հավաքածուն, որը սակայն լույս տեսավ միայն 2002 թվականին՝ Ա. Բրուտյան, Ռամկական մրմունչներ, Երևան:

⁴³ Հայ գուսանական երգեր, էջ 7:

հրատարակված չի եղել և խնդրու առարկա հատորում լույս է տեսել առաջին անգամ: Այդ երգերից են, մասնավորապես, Շիրինի «Լի արշալույս խնդալի», Պայծառեի «Ո՞վ լուսին» և մյուս երգերը, Զիվանու «Ախար արի ասօր», Սահուրի «Գործ չունիս»⁴⁴ և այլն⁴⁵: Ժողովածուում զետեղված են նաև Ս. Եկմալյանի, Կոմիտասի, Ա. Բրուտյանի, Սպ. Մելքոնյանի, Հ. Հարությունյանի, Ա. Մանուկյանի, Քր. Քոչնարյանի, Ն. Թահմիզյանի և այլոց կողմից կատարված աշուղական երաժշտության ծայնազրությունները: Ժողովածուում երգերը դասակարգված են ըստ բովանդակության՝ «մոտիվների» և ամփոփված են չորս գլուխներում՝ «շարքերում»: Դրանք են՝ «Հույս, ապավեն, խրատ, ծաղր»՝ առաջին շարք, «Ավերածություն, պանդխտություն, կարոտ, վիշտ»՝ երկրորդ շարք, «Հայրենասիրական մոտիվներ»՝ երրորդ շարք, «Սիրու մոտիվներ»՝ չորրորդ շարք: «Շարքերում» երգերը հաջորդվում են ժամանակագրական կարգով՝ իհն գուսանական երգերից, տաղերգուներից մինչև ժամանակակից աշուղները: Դրանով իսկ արտացոլվել են թե՛ աշուղական երգարվեստին խիստ բնորոշ «մոտիվների» մեկնության պատճական ընթացքը, թե՛ հայ աշուղական երաժշտության ծագումնաբանության հարցերը: Նշենք երաժշտագիտի հասուլ ուշադրությունն աշուղական երգերի մեղեղիական տարբերակների նկատմամբ: Այսպես, Սայաթ-Նովայի «Դուն էն զիխեն իմաստուն իս», Զիվանու «Զախորդ օրերը», Զահրիի «Կարդացեք իմ բախտի նամակի սեր», Շահենի «Յոքն օր, յոք գիշեր» երգերը ներկայացված են տարբերակներով⁴⁶:

Ժողովածուն ունի պատկառելի, իմանավոր գիտական ապարատ: Այն կազմում են «Ներածությունը» հայ աշուղական երաժշտությանը նվիրված խորինաստ, նշանակալից ուսումնասիրությունը⁴⁷, մանրամասն «Ծանոթագրությունները», բարբառային և օտարակենու բառերի «Բառարանը», տարբեր «Յանկեր» (ընդգրկված երգերի, երգերի

⁴⁴ Նույն տեղում, N 111, էջ 346, NN 76, 77, 121, էջ 345, 347, N 18, էջ 341, N 21, էջ 341:

⁴⁵ Աշուղական երաժշտության բոչարյանական գրառումները լույս են տեսել նաև այլ ժողովածուներում: Տե՛ս. Շերամ, Երգեր, Երևան, 1981, Զիվանի, Երևան, 1955՝ «Ինչ կամենաս քո ընկերի», էջ 40, «Քյասիպուրեն», էջ 44, «Ասի - ասավ», էջ 57, «Օր ըստ օրե», էջ 65 և այլն:

⁴⁶ Հայ գուսանական երգեր, NN 7-8, 11-13, 57-58, 163-164:

⁴⁷ Այս մասին տե՛ս հոդվածի 53-55 էջերը:

հետինակների, վերջիններիս կենսագրականների, երգերի կատարողների, օգտագործված գրականության): Ժողովածում սկսվում է Ն. Թահմիզյանի բովանդակալից «Երկու խոսքով»:

Քոչարյանը առաջին հայ երաժշտագետն է, որի համար հայ աշուղական երաժշտությունը հանդիսացավ հասունափորության առարկա: Այս ուղղությամբ Քոչարյանի հաջորդներն ու արժանի հետնորդներն են Ն. Թահմիզյանը, Մ. Մանուկյանը, Լ. Երնջակյանը և ուրիշներ:

Երաժշտական աշուղագիտության ասպարեզում Քոչարյանը ձայնագրեց, նույագրեց, հետազոտեց, հրատարակեց... Միաժամանակ, մշակվեցին աշուղական երգի հետազոտման որոշակի սկզբունքներ, որոնց անկյունաքարը՝ երգային նմուշի մեղեդու և բանաստեղծության փոխադարձ կապն է: Ավելացնենք նաև, որ երաժշտագետը ներքափականում էր իր խնդրու առարկայի խորքերը ոչ միայն տաղանդավոր տեսարանի իմացաւեր հայացքով, այլ և մեծ երաժշտի նրբանկատ, զգայուն լսողությամբ, քանի որ «լսողության միջով չանցածը ոչ երաժշտություն է, ոչ էլ երաժշտագիտություն»⁴⁸: Կրա հսկաստիքն է Զիվանու «Զախորդ օրերը» հանրահայտ երգի բոչարյանական անգրուգական կատարումը⁴⁹:

Э. Мирзоян

НЕСКОЛЬКО СЛОВ О ЗАМЕЧАТЕЛЬНОМ МУЗЫКАНТЕ И ЧЕЛОВЕКЕ

Время идет... Одно из самых дорогих для меня воспоминаний связано с Арамом Карповичем Кочаряном, - личностью необычной, необыкновенной и вроде бы не совсем понятной. Начну с того, что будучи высокообразованным человеком, он, мягко говоря, не обладал ораторским даром. Говорил мало, скромно, часто как бы намеками. Порою же поражал необычностью и неожиданностью своих суждений. Не могу

⁴⁸ И. Земцовский, Апология слуха, "Музыкальная академия", М., 2002.

⁴⁹ Զայնագրությունը պահպանվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայնադարանում:

забыть, как на поминках после похорон Мушега Агаяна он сказал: «Մուշեղ Աղայանը եկավ իրքը համելով և զատ իրքը համելով» («Мушег Агаян как при жизни был загадкой, так и ушел загадкой»). Вероятно трудно было бы более точно и метко охарактеризовать Мушега Агаяна, - человека необычного и, в общем-то, не понятого. Добавляю любопытный штрих, - даже записки он подписывал: Կոմունիստական պղույններով՝ Մուշեղ Աղայան («С коммунистическими приветами Мушег Агаян»).

Арам Кочарян, как его я знал и помню, обладал высочайшим вкусом в музыке, да, пожалуй, и не только в музыке. Придерживался привычек старой армянской интеллигенции. Когда он жил в доме 27 по улице Демирчяна, я часто встречался с ним. Он своего сына Артавазда даже в детские годы всегда называл полным именем (вопреки употребляемым в нашем быту уменьшительным именам). И надо было видеть, с каким удовольствием и гордостью он произносил: «Артавазд»!

Помню, как он увлеченно работал над оперой «Хозяин и слуга» (по сказке Ов. Туманяна) и показывал в Союзе композиторов ее отрывки. Закончив оперу, он показал ее и в Театре оперы и балета имени Спендиарова. На этом все и кончилось. В дни его тяжелой болезни я старался часто его навещать и видел, как его волновала судьба оперы. Я взял грех на душу, сказав ему, что в театре снова обсудили вопрос его оперы и приняли ее к постановке. После его кончины я признался его супруге Рузан, что это была неправда. Рузан сказала в ответ: «Я это знала». Не могу скрыть, что на мой взгляд опера эта имела мало шансов быть принятой к постановке, ибо в ней имелись драматургические просчеты, не всегда угадывалась логика развития. Что же касается его романсов и хоров, то и сейчас я убежден в том, что они не потеряли своей художественной ценности. Современники хорошо помнят, каким успехом пользовалось в исполнении капеллы его хоровое произведение «Нахшун акир» («Նախշն ակիր»).

Главное, что хотелось бы мне сказать – это то, что Арам Карпович Кочарян был настоящий интеллигент, необычайно скромный, образованнейший музыкант, крупный ученьй. Ваша конференция, организованная Институтом искусств Национальной академии наук

Армении, еще раз это подтвердила, как подтвердила и то, что Арама Кочаряна плохо знают и что почти не изучено его богатое творческое наследие.

На конференцию, посвященную 100-летию со дня рождения Арама Карповича Кочаряна, меня никто не приглашал (это – без упрека). Но я счел своим долгом присутствовать на ней. Я внимательно прослушал все выступления. Докладчики подробно и достойным образом представили Арама Кочаряна как большого ученого, музыковеда и фольклориста, внесшего значительный вклад в развитие отечественного музыкоznания. Очень обрадовало также единодушно принятное решение о присвоении фонотеке Института искусств имени ее основателя – Арама Кочаряна.

В заключение еще одно воспоминание. В возрасте 14-15 лет, будучи уже студентом консерватории, мне довелось прослушать несколько лекций Арама Карповича (кстати, он первым в нашей консерватории ввел курс изучения истории армянской музыки). Так вот, на одной из лекций Арам Карпович рассказывал, как порой трансформируются известные мелодии в музыкальном быту разных народов, подчиняясь стилистическим, ладовым и иным закономерностям своей музыкальной культуры. Будучи не лишен своеобразного юмора, в качестве примера он привел вариант «Интернационала» в «китайском стиле». Это было так ярко и наглядно, что я, даже спустя 70 лет, хорошо его помню, что и подтверждаю в нотной записи:

A handwritten musical score on two staves. The top staff is in common time (indicated by 'C') and has a key signature of one sharp (F#). It consists of six measures of music. The bottom staff is also in common time and has a key signature of one sharp (F#). It consists of four measures. A brace groups the first two measures of each staff together. The music is written in a simple, rhythmic style using quarter notes and eighth notes.

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ¹

Գրքեր

1. Сборник песен для ойротских школ, *Ойрот-Тура, 1931.*
2. Армянская народная музыка, *Москва-Ленинград, 1939.*
3. Հայաստանի հարվածային (հարկանային) գործիքները, *Երևան, 1965:*
4. Հայկական գուսանական երգեր, *Երևան, 1976:*

Հոդվածներ

1. Շամշադինի երաժշտական կոլլուգարան, «Խորհրդային արվեստ», Երևան, 1936, դեկտեմբեր, 1937, հունվար:
2. Շամշադինի երաժշտական էքսպերիմենտացիան, «Խորհրդային արվեստ», Երևան, 1937, հունվար, N 1, 2:
3. Ուսումնասիրներ ժողովրդական արվեստը, «Շամշադինի կոլլուգամիկ», 1937, փետրվարի 12, N 9, ԳԱՍԹ:
4. Ժողովրդական գործիքների զարգացման հիմնական էտապները, Երևան, «Խորհրդային արվեստ», Երևան, 1938, N 4:
5. Հայ երաժշտական լեզվի զարգացման հիմնական էտապները, «Խորհրդային արվեստ», Երևան, 1942, N 2:
6. Ո-նմանու Մելիքյանի երաժշտական լեզուն, «Գրական թերթ», Երևան, 1945:
7. Ո-նմանու Մելիքյան, մահվան 15-ամյակի վերաբերյալ, «Գրական թերթ», Երևան, 1950:
8. Ժողովրդական երաժշտական գործիքները Հայաստանում, “Baikar” («Պայքար»), Armenian Daily Newspaper, Boston, 1961, դեկտեմբեր, ԳԱՍԹ:

¹ Աշխատությունների ցանկը կազմվել է լստ Ե. Զարենցի անվ. Գրականության և արվեստի բանգարանում (այսուհետև՝ ԳԱՍԹ) պահպող Ա. Քոչարյանի փոնդի, ՀՀ ԳԱՍԹ Արվեստի ինստիտուտի ժողովրդական արվեստի բաժնի Ա. Քոչարյանի արխիվի և հեղինակի այրու կողմից հանձնված գրառումների տետրի: Զանի որ բանգարանում դեռևս Ա. Քոչարյանի փոնդի գիտական մշակումն ավարտված չէ՝ հնարաբնություն չունենալու ներկայացնելու նյութերի արխիվային տվյալները: Յուրաքանչյուր աշխատության վերնագրի մոտ աշխատել ենք հնարաբնությունների մեջ հայտնի տվյալները՝ ճեռագիր, մերենագիր, պատրաստվում է հրատարակման, էջերի բանակը, տարեթիվը և գտնվելու վայրը: Խորին երախտագիտություն ենք հայտնում ԳԱՍԹ-ի Երաժշտության բաժնի փոնդի աշխատակիցներին՝ սիրալիր օժանդակության համար:

- Գողովլրական երաժշտական գործիքները Հայաստանում, “*Iraber*” (*«Լրաբեր»*) publishing company, New York, 1962, հունիս, Գ-Աթ:
 - Սիափող սրինգ, «Տեղեկագիր» ԳԱ Հասարակական գիտությունների, Երևան, 1962, N 11:
 - Երաժշտական գործիքները Հայաստանում (փողային խումբ), Պատմա-քանասիրական հանդես, Երևան, 1963, N3:
 - Армянские народные музыкальные инструменты, Атлас музыкальных инструментов народов СССР, К. Вертиков, Г. Благодатов, Э. Язовицкая, Москва, 1963 г. стр. 87-92.
 - «Սանա ծուեր» էպոսի երաժշտությունը, Գիտական աշխատությունների միջրուկական ժողովածու, N3, Արվեստագիտություն, Երևան, 1977,էջ 53-69:
 - Հայաստանի երաժշտական գործիքները, «Գիտություն և տեխնիկա», Երևան, 1970, NN 1, 2, 12:

ԽՄԲԱԳԻՐԱԿԱԲԻ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մ. Գ. Լյովենցյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական երգերն ու ելանակները, խմբագիր՝ Ա. Քոչարյան, ներածությունը՝ Ա. Մանուկյանի, Հայ ազգագրություն և քանակայություն, հ. 2, Երևան, 1971 էջ 131-229:

ԱՅՆԻՎ աշխատություններ

Qnptin

- Կոմիտաս, Էտյուդներ, ծննդյան 77-ամյակի առթիվ, մենագրություն, 2 մասից, երաժշտագիտական առաջարանով, մեքենագիր, շորջ 200 թերթ, Երևան, 1946, ԳԱԹ:
 - Էջեր հայ վիպական երգաստեղծություննից, 1976-1977, հանձնվել է տպագրության, բայց չի հրատարակվել, մեքենագիր, 300 թերթ, ՀՀ գԱԱ ԱԻ:

ԺԱՌԱՎԱԾՈՒՅԹ

1. Աշուական երգերի տեքստեր, Ապարան, հայերեն, հայատառ ալբրեժաներեն, զրի է առել Ա. Քոչարյանը, ձեռագիր, 24 թերթ, 1939, գԱԹ:
 2. Երգերի ժողովածու, ճայմագրել է Ա. Քոչարյանը, ձեռագիր, 38 թերթ, գԱԹ:

- Երաժշտական ազգագրություն, աշուղական երգեր, ճայմագրել է Ա. Քոչարյանը, մերենագիր, 57 թերթ, ԳԱԹ:
- Երգերի ժողովածու, ճայմագրել է Ա. Քոչարյանը, մերենագիր, 104 թերթ, ԳԱԹ:
- Երգերի ժողովածու, Ա. Քոչարյանի ճայմագրությամբ՝ աշուղ Շերամի երգածից: Հնդգրկում է «Լիրիկական», «Վրացական», «Ժողովրդական», «Սագանդարսական», «Եվրոպական», «Սովետական» և «Պարեր» բաժինները, մերենագիր, 223 թերթ, ԳԱԹ:
- Հայ աշուղների սիրավեպեր, տեքստ և նոտաներ, ճայմագրությունը՝ Ա. Քոչարյանի: Գրասվել է հայ գուսանների երգածից, ձեռագիր, 308 թերթ, 1976, ՀՀ ԳԱԱ ԱԻ: 78 մմուշից 69 ճայմագրել և նոտագրել է Ա. Քոչարյանը, 5-ը՝ Սպ. Մելիքյանը, 4-ը՝ Ա. Բրուտյանը:
- Շերամ՝ երգեր, ժողովածու, խմբագիր՝ Ա. Աղայան, Երևան, 1959: Գրքում զետեղված է Ա. Քոչարյանի ճայմագրություններից 18 երգ:

Հոդվածներ

- Ալ. Սպենդիարյան, մերենագիր, 11 թերթ, 1941, ԳԱԹ:
- Երաժշտական գործիքները և գործիքային արվեստը Հայաստանում (ընդհանուր ակնարկ), 1944, մերենագիր, 58 թերթ: Նույն նյութը սատրաստվել է ՀՍՍՌ ԳԱ առաջին երաժշտական գիտաժողովի համար, մերենագիր, 53 թերթ, ԳԱԹ:
- Հայ երաժշտական լեզվի զարգացման հիմնական հտապնդերը, 1945, մերենագիր, 63 թերթ, ԳԱԹ:
- Աշուղ Շերամ, մերենագիր, 13 թերթ, մահվան 10-ամյակի առթիվ, 1948, ԳԱԹ:
- Հուշեր Հակոբ Հովհաննիսյանի մասին, ձեռագիր, 9 թերթ, ընթերցվել է 13. 11. 1976 թ. Էջմիածինի քաղաքում Հ. Հովհաննիսյանին նվիրված հուշերեկոյի ժամանակ, ԳԱԹ:
- Արմեն Տիգրանյան, մերենագիր, 13 թերթ, 1977, անավարտ, ԳԱԹ:
- Ուսմանու Մելիքյանի տեղն ու դերը հայ երաժշտության մեջ, մերենագիր, ՀՀ ԳԱԱ ԱԻ:
- Ансамбли, оркестры, кадры, производство, восточный симфонический оркестр из реконструированных инструментов, II часть, 31 маш. стр., ԳԱԹ:
- Современные народные инструменты, 119 маш. стр., ԳԱԹ:

Գիտամեթոդական աշխատանք

1. Նախագիծ ՀՍՍՌ ԱԻ ժողովրդական երաժշտության կարինետի կազմակերպման, 4 մերենագիր թերթ, ԳԱԹ:
2. Երաժշտական գիտահետազոտական կարինետ՝ ԵԳՀԿ, անավարտ, 3 մերենագիր թերթ ԳԱԹ:

Կոմպոզիտորական ստեղծագործություններ²

1. Տերն ու ծառան, օպերա 4 գործողությամբ և 5 պատկերով՝ բառ Հովհ. Թումանյանի, 1970, յի բնմադրվել առանձին համարմերը կատարվել են համերգների ժամանակ, ծրագիր, ԳԱԹ:
2. Սասունցի Դավիթ, օրատորիա, սիմֆոնիկ միջազամբի, երգչախմբի և մենակատարմերի համար, ճեռագիր, անավարտ, ԳԱԹ:

Երգչախմբային ստեղծագործություններ

1. Արևը թերվել է, խոսք՝ Ավ. Իսահակյանի, կանաց վոկալ ամսամբլի, դաշնամուրի, 2 ջուրակի և քաջուրակի համար, ծրագիր, ԳԱԹ:
2. Հայ հույ, երգչախմբի համար, Երևան, 1938:
3. Նախշուն արքիր, բազմաժայն ա capella երգչախմբի համար, Երևան, 1937:
4. Հիմն խաղաղության, խմբերգ, խոսք՝ Ա. Քոչարյանի, Երևան, 1955:
5. Երկու խմբերգ մենակատարի և երգչախմբի համար՝ Նազելի, խոսք՝ Ա. Քոչարյանի, Երբ գարուն եկավ, խոսք՝ Բ. Կարապետյանի, Երևան, 1972:

Երգեր ձայնի և դաշնամուրի համար

1. Գարնան բացվելու հետ, խոսք՝ ժողովրդական, Երևան, 1931:
2. Հունորենսկ, խոսք՝ Ա. Քոչարյանի, ծրագիր, ԳԱԹ:
3. Հովհանն ու շունը, խոսք՝ ժողովրդական, ծրագիր, ԳԱԹ:
4. Ալվեսը, խոսք՝ ժողովրդական, Երևան, 1940:
5. Կկուն, խոսք՝ Ա. Քոչարյանի, Երևան, 1940:
6. Լուսաբացին, խոսք՝ Հովհ. Թումանյանի, Երևան, 1940:
7. Անհայտ գերեզման, խոսք՝ Ավ. Իսահակյանի, Երևան, 1942:
8. Արարատի ծեր կատարին, խոսք՝ Ավ. Իսահակյանի, ծրագիր, ԳԱԹ:

² «Ծրագիր» բառով նշվում են հեղինակի այն ստեղծագործությունները, որոնց գոյության և կատարման մասին մեզ հայտնի հավաստի աղբյուրը համերգային ծրագրերն են:

9. Հերիք, դու զահել, հպարտ հասակ, խոր՝ Ավ. Իսահակյանի, ծրագիր, ԳԱԹ:
10. Ուրին, խոր՝ Ավ. Իսահակյանի, ծրագիր, ԳԱԹ:
11. Զառ մանթաշի, խոր՝ Ավ. Իսահակյանի, ծրագիր, ԳԱԹ:
12. Եկան զմացին, խոր՝ Ավ. Իսահակյանի, ծրագիր, ԳԱԹ:
13. Արդյոր կզղաս, խոր՝ Վ. Տերյանի, Երևան, 1944:
14. Գիշերն է իջել, խոր՝ Վ. Տերյանի, ծրագիր, ԳԱԹ:
15. Երբ կզանա, խոր՝ Վ. Տերյանի, ծրագիր, ԳԱԹ:
16. Կարոս, խոր՝ Վ. Տերյանի, ծրագիր, ԳԱԹ:
17. Ծուտիկը, խոր՝ Ա. Խնձորյանի, Երևան, 1946:
18. Թուրդ տուր, խոր՝ Խ. Արովյանի, Երևան, 1948, ծրագիր, ԳԱԹ:
19. Ուրին, խոր՝ Ավ. Իսահակյանի, Երևան, 1965, ծրագիր, ԳԱԹ:
20. Բաժակը կենաց, խոր՝ Ա. Քոչարյանի, ծրագիր, ԳԱԹ:
21. Իրիկնային սերենադ, խոր՝ Ա. Քոչարյանի, ծրագիր, ԳԱԹ:
22. Ընկածների հիշտուակին, խոր՝ Ա. Քոչարյանի, ծրագիր, ԳԱԹ:
23. Колхозная, для голоса с ф-но, в ойротском стиле, на ойротском и русском яз., Ойрот-Тура, 1932-1933.
24. Сенокос, для голоса с ф-но, в ойротском стиле, на ойротском и русском яз., Ойрот-Тура, 1932-1933.
25. Обручение Бахтагюла, для голоса с ф-но, в ойротском стиле, на ойротском и русском яз., Ойрот-Тура, 1932-1933.
26. Джан Сталин и Колхозная, обр. песен ашуга Григора, массовые песни без сопровождения (премия I степени).

Նվագարանային ատեղծագործություններ

1. Երգիծանք, ջուրակի և դաշնամուրի համար, ծրագիր, ԳԱԹ:
2. Կատակ, ջուրակի և դաշնամուրի համար, ծրագիր, ԳԱԹ:
3. Պոեմ սկերցո, ջուրակի և դաշնամուրի համար, ծրագիր, ԳԱԹ:
4. Պրելյուդ, ջուրակի և դաշնամուրի համար, ծրագիր, ԳԱԹ:
5. Պար, ջուրակահարների անսամբլի համար, ծրագիր, ԳԱԹ:
6. Ո-ոմանս, ջուրակահարների անսամբլի համար, ծրագիր, ԳԱԹ:
7. Անդանտե, սոլո բավուրթակի կամ բավուրթակահարների անսամբլի համար, ծրագիր, ԳԱԹ:
8. Pastorale, в башкирском стиле для гобоя с ф-но, Ойрот-Тура, 1931.
9. Походный марш №2, Ойрот-Тура, 1932, для гобоя с ф-но.

10. Марш народов Ойротии, к 10-летию Ойротской авт.обл.,
для духового орк., Ойрот-Тура, 1932.

Կազմեց՝ Ժամանակակից Անհրաբյանը



ԾՐԱԳԻՐ¹

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ - ԿՈՄՊՈԶԻՏՈՒՐ ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎՈՅՑԻ

Խոսք Արամ Քոչարյանի կյանքի ու գործներթյան նախան. Ժողովրդական կոմպոզիտոր, պրոֆեսոր Անուշավան Տեր-Ղևոնյան:

ՀԱՍԵՐԳ Առաջին բաժին

1. Աղջկների պար
2. Տղամարդկանց պար - դաշնամուր, կատարում է Ամայա Բայրուրյանը
3. Կարոտ - խոսք՝ Վահան Տերյանի
4. Եկան զնացին - խոսք՝ Ավետիք Խսահակյանի
5. Մարզարիտի նշանդեքը - խոսք՝ Արամ Քոչարյանի
6. Գոհարի արիան «Տերն ու ծառան» օպերայից - կատարում է Ֆլորա Խորենանը
7. Կատակ
8. Պոեմ
9. Երգիծանք - ջուրակ, կատարում է Զարեհ Մահակյանը
10. Թուրք տուր - խոսք՝ Խաչատոր Աբովյանի
11. Արարատի ծեր կատարին - խոսք՝ Ավետիք Խսահակյանի

¹ Ծրագրի մերենագիր օրինակը գտնվում է Ե. Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի Երաժշտական բաժնի Ա. Քոչարյանի փոնդում (ծրագիրը ներկայացվում է առանց միջամտության):

12. Բաժակը կենաց – խոսք՝ Արամ Քոչարյանի
13. Ավագի արիան «Տերն ու ծառան» օպերայից - կատարում է Շարա Տայյանը, դաշնամուրի պարտիան կատարում է Մարիաննա Հարուբյանը:

Երկրորդ բաժին

1. Զառ Մանքաշի – խոսք՝ Ավետիք Խսահակյանի
2. Անհայտ գերեզման – խոսք՝ Ավետիք Խսահակյանի
3. Կկուն – խոսք՝ Արամ Քոչարյանի
4. Շնոտիկ – խոսք՝ Արարեկ Խնձորյանի
5. Երբ կզա նա – խոսք՝ Վահան Տերյանի
6. Իրիկնային սերենադ – խոսք՝ Արամ Քոչարյանի
7. Օլորոցային. «Տերն ու ծառան» օպերայից - կատարում է Ոլոզա Դանիելյանը, բազուրակի պարտիան կատարում է արվեստի վաստակավոր գործիչ՝ Գուրգեն Աղամյանը
8. Անդանտե - բազուրակ, կատարում է արվեստի վաստակավոր գործիչ՝ Գուրգեն Աղամյանը
9. Գարման երգ- խոսք՝ Բարկեն Կարապետյանի
10. Ընկածների հիշատակին- խոսք՝ Արամ Քոչարյանի
11. Հիմն խաղաղության – խոսք՝ Արամ Քոչարյանի, երգեցիկ խմբի և սիմֆոնիկ օրկեստրի համար, կատարում է հայֆիլհարմոնիկ պետական երգեցիկ խումբը ղեկավարությամբ՝ արվեստի վաստակավոր գործիչ Նուբար Մնջրյանի, առլոն կատարում է Եղյանը, օրկեստրի պարտիան դաշնամուրի վրա կատարում են Իրինա Սեղրակյանը և Ամայա Բայրությանը:

Резюме

14 октября 2003 года исполнилось 100 лет со дня рождения Заслуженного деятеля искусств Арм. ССР Арама Карповича Кочаряна — одного из выдающихся представителей армянского искусствознания, чья деятельность и труды музыковеда-фольклориста оставили неизгладимый след в исследовании и познании музыкальной культуры армянского народа.

13 ноября 2003 г. в Институте искусств НАН РА состоялось расширенное заседание ученого совета Института, на котором были зачитаны ряд докладов, посвященных музыкальной, общественной и научной деятельности Арама Кочаряна. Ученым советом Института было принято решение на основании прочитанных докладов составить сборник статей, посвященных научной деятельности А. Кочаряна, дополнив его библиографией его трудов (изданных и рукописных), а также наименовать фонотеку Института искусств именем заложившего основы этой фонотеки (1934 г.) — Арама Кочаряна.

В конце сборника приведены слова выдающегося художника Мартироса Сарьяна: *“Я высоко ценю Арама Карапетовича Кочаряна, как художника-композитора, как музыканта-мыслителя и как общественного музыкального деятеля. Арам Кочарян внес в дело строительства и развития армянского музыкального искусства свой огромный вклад.”*

Сборник открывается вступительным словом зам. директора Института, засл. деятеля искусств, профессора Г. Геодакяна. В своем слове он характеризует А. Кочаряна, как человека яркого, принципиального и целеустремленного, как крупного ученого, чей выдающийся вклад в область научной фольклористики еще недостаточно оценен. Одной из самых главных заслуг А. Кочаряна докладчик считает организацию в 1934 году Гос. музыкального научно-исследовательского кабинета им. Р. Меликяна, который стал основой сектора истории и теории музыки АН Арм. ССР (1944 г.), сектора истории и теории искусств (1948 г.) и, наконец, Института искусств АН Арм. ССР (1958 г.).

Далее следуют ряд статей научных сотрудников отдела народной музыки Института искусств, в первой из которых представлены жизнь и творческий путь А. Кочаряна (статья К. Худабашян). В статье М. Саркисян охарактеризована деятельность А. Кочаряна как собирателя народной армянской музыки. Подробно описано содержание его фонда в фонотеке Института искусств. Из 2000 записанных А. Кочаряном крестьянских, ашугских, эпических и инструментальных образцов армянской народной музыки в фонотеке Института хранится 900 — которые характеризуются автором статьи как "золотой фонд фонотеки". В последующих статьях (Р. Пикичян, Ж. Меграбян, А. Багдасарян) представлены труды А. Кочаряна (опубликованные и рукописные), посвященные различным, до него малоисследованным, областям армянского музыкального фольклора. Особенно детально рассмотрены и охарактеризованы его капитальные монографии "Ударные и духовые народные музыкальные инструменты в Армении" (рукопись диссертации, защищенной в 1965 г.), "Армянское эпическое песнетворчество" (рукопись принятая к печати в 1988 г., но неизданная), "Армянские гусанские песни" (изд. 1976 г.), "Ашугские любовные сказы" (рукопись завершена в 1976 году).

Сборник завершается публикацией выступления на Совете Народного артиста СССР, композитора Э. Мирзояна, а также списком трудов А. Кочаряна. В приложении представлена программа концерта, посвященного творчеству Арама Кочаряна — композитора.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Գյողակյան – Խոսք Արամ Քոչարյանի մասին	5
Կարինե Խուդաբաշյան - Արամ Կարապետի Քոչարյան (կյանքը և ստեղծագործական ուղին)	8
Մարգարիտ Մարգարյան - Արամ Քոչարյանի ժող. երաժշտության հավաքածում՝ լսու ՀՀ ԳԱԱ Արքեստի իմստիտուտի ձայնադարանային ֆոնդի	16
Հոփիսիմ Պիկիչյան – Հայ ավանդական նվազարաններին նվիրված Արամ Քոչարյանի ուսումնասիրությունները	21
Ժամանեն Մեհրաբյան - Արամ Քոչարյանը հայ վիպական երգերի բանահավաքը և ուսումնասիրող	27
Անահիտ Բաղդասարյան - Արամ Քոչարյանը և հայ աշուղական երաժշտությունը	39
Էդվարդ Միրզոյան – Մի քանի խոսք երաշալի երաժտի և մարդու մասին	49
Արամ Քոչարյանի աշխատանքների ցանկ	52
Երաժշտագետ-կոմպոզիտոր Արամ Քոչարյանի ստեղծագործություններին նվիրված համերգի ծրագիր	57
Ամփոփում (ռուսերեն)	59

СОДЕРЖАНИЕ

Геворг Геодакян – Слово об Араме Кочаряне	5
Карине Худабашян – Арам Карпович Кочарян (жизнь и творческий путь)	8
Маргарит Саргсян – Образцы традиционной музыки, собранные Арамом Кочаряном – в фондах фонотеки Института искусств НАН РА	16
Рипсиме Пикичян – Исследования Арама Кочаряна, посвященные армянским традиционным музыкальным инструментам	21
Жасмен Меграбян – Арам Кочарян собиратель и исследователь армянских эпических песен	27
Анаят Багдасарян – Арам Кочарян и армянская ашугская музыка	39
Эдуард Мирзоян – Несколько слов о замечательном музыканте и человеке	49
Список трудов Арама Кочаряна	52
Программа концерта, посвященного произведениям композитора Арама Кочаряна	57
Резюме	59

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆ
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Յանձնված է տպագրությամբ՝ 28.04.2004թ.: Ծավալը՝ 4.0 մամուլ;
Թուղթ՝ օֆսեթ N 1: Յրատ. պատվեր N 147

ՀՀ ԳԱՍ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24⁹:

[350pp.]

«Ես բարձր եմ գնահատում Արամ Քոչարյանին, որպես արվեստագետ, կոմպոզիտոր, որպես երաժիշտ-մտավորական և որպես հասարակական գործիչ։ Արամ Քոչարյանը հայ երաժշտական արվեստի կառուցման գործում իր հսկայական ներդրումն է կատարել»։

A II
89048

ԳԱԱ Եկմանարար գիտ. գուար.



220089048